




ԺԱՌԱՆԱԿԱԿԻՒԾ ԵՎՐԱՍԻԱ



V(2)
2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԻՋՎԵԼՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒԻՏ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ԹՈՒՐՔԻԱ.

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐ

ՈՒԽԹԵՆ ՍԱՖՐԱՆՏՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԻՐ

ՀԱՏՈՐ V (2)

ԵՐԵՎԱՆ 2016

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

CONTEMPORARY EURASIA

TURKEY:
QUESTIONS ON FOREIGN POLICY

EDITED BY RUBEN SAFRASTYAN

VOLUME V (2)

YEREVAN 2016

СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ

ТУРЦИЯ:
ВОПРОСЫ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСТЯНА

ТОМ V (2)

ЕРЕВАН 2016

ՏՐԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱՊԻՏՈԽԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՐԱ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Թուրքեն Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՐԴ
Լիլիթ Հարությունյան, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ
գիտաշխատող
Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ
գիտաշխատող
Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ
գիտաշխատող
Նոնի Հովսեփյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ գիտաշխատող
Նազելի Նավասարդյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ գիտաշխատող
(հատորի պատասխանատող)

«Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականի սույն պրակն ընդգրկում է Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնախնդիրներին նվիրված վերլուծական ուսումնասիրություններ: Ժողովածուն նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, փորձագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

PUBLISHED BY THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL
OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

EDITOR IN CHIEF

Ruben Safrastyan, Academician of NAS RA

EDITORIAL BOARD:

Lilit Harutyunyan, PhD, Assoc. Prof., Senior Research Fellow IOS NAS RA
Gohar Iskandaryan, PhD, Assoc. Prof., Senior Research Fellow IOS NAS RA

Vahram Ter-Matevosyan, PhD, Senior Research Fellow IOS NAS RA

Levon Hovsepyan, PhD, Senior Research Fellow IOS NAS RA

Nazeli Navasardyan, PhD, Research Fellow IOS NAS RA, Responsible for
the Volume

The current volume of the "Contemporary Eurasia" includes articles covering a number questions regarding Turkish foreign policy. The volume may be of interest to scholars, experts and students.

ISSN 1828-3948
© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2016

ISSN 1828-3948

ИЗДАЕТСЯ ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГЛАВНЫЙ РЕДАКТОР

Рубен Сафрасян, академик НАН РА

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Лилит Арутюнян, к. и. н., доцент, старший научный сотрудник ИВ НАН РА

Гоар Исакяндарян, к. и. н., доцент, старший научный сотрудник ИВ НАН РА

Ваграм Тер-Матевосян, к. и. н., старший научный сотрудник ИВ НАН РА

Левон Овсепян, к. и. н., старший научный сотрудник ИВ НАН РА

Назели Навасардян, к. и. н., научный сотрудник ИВ НАН РА,
(ответственная за выпуск)

Том V (2) периодического сборника "Современная Евразия" посвящен анализу внешнеполитических проблем Турции.

Выпуск предназначен для историков, политологов, дипломатов, экспертов, студентов, а также для широкого круга читателей, интересующихся Ближневосточным регионом.

ԲՐԱՄԿԱՆԱՀԱՅՈՒՆ

ՎԱՐԴԱՐԱՌԱՋԱԿԱՆ ՏՐԱՎԵԿՈՎԱՅՐ

ԹՈՒՐՔԻԱՆ ՄՐԱՓԻՆ ՔՐԱՔԱԿԱՆԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԵՎ ՀԱՍՏԱԴՈՒՅԻՆԿԱՆ ԿԱՂԱԿԵՐՊՎԱԾՐԻ ԱԽԱՏԱ-
ՀԱՏԿՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ 10

ԱԼՈՒՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԻ

ՄԴՐԵՋԱՆԻ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐՔԻԱՆ «ՀԱՅԿԱՆ ՆԱԽԱ-
ՁԵՄՆՈՒԹՅԱՅԻ» ԶԱԿՈՂԱՌ ՀԱՍՏԵՐԱԾՈՒՄ (2008-2010
ԺԹ.) 40

ՆԵՐԱՆ ՄԻՆԱՑՅԻ

ԹՅԱՆԴ ՔԱՂՋԵՐԻ ԵՐԿՐՈՒՐԻ ԳԱԳՄԱՆԱՌՈՂՈՎՆԵՐԻ ՆՊԱ-
ՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 63

ՏՐԵՖԻԿ ՄԱՆՈՒԿՅԻ

ՀԱՅՈՅ ՅԵՐԱՊԵՏՈՒՅՅԱՅ ԺԵՏՈՎԱԿԱՆՈՒԹՅԱՅ ՎԵՐ-
ԲԵՐՅԱԸ, ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱԽՈՒ-
(2005 ԺԹ.) 82

CONTENTS

| | |
|--|----|
| VAHRAM TER-MATEVOSYAN FEATURES OF LEGAL AND INSTITUTIONAL STRUCTURES OF TURKISH FOREIGN POLICY | 10 |
| ANUSH HOVHANNISYAN AZERBAIJANI FACTOR IN THE CONTEXT OF THE FAILURE OF THE "ARMENIAN INITIATIVE" OF TURKEY (2008-2010) | 40 |
| NELLI MINASYAN THE GOALS AND RESULTS OF THE SUMMITS OF TURKIC- SPEAKING STATES | 63 |
| TATEVIK MANUKYAN DISCUSSIONS IN THE TURKISH PARLIAMENT ABOUT DENIAL OF ARMENIAN GENOCIDE (2005) | 82 |

СОДЕРЖАНИЕ

| | |
|--|----|
| ВАГРАМ ТЕР-МАТЕВОСЯН ОСОБЕННОСТИ ПРАВОВОЙ И ИНСТИТУЦИОНАЛЬНОЙ СТРУК- ТУРЫ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ | 10 |
| АНУШ ОВАННИСЯН ФАКТОР АЗЕРБАЙДЖАНА В КОНТЕКСТЕ ПРОВАЛА «АРМЯН- СКОЙ ИНИЦИАТИВЫ» ТУРЦИИ (2008-2010 ГГ.) | 40 |
| НЕЛЛИ МИНАСЯН ЦЕЛИ И РЕЗУЛЬТАТЫ САММИТОВ ТЮРКОЯЗЫЧНЫХ СТРАН .. | 63 |
| ТАТЕВИК МАNUКЯН ОБСУЖДЕНИЯ В ПАРЛАМЕНТЕ ТУРЦИИ НА ТЕМУ ОТРИЦАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2005 г.) | 82 |

ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆԻԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԵԿ ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՔԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության համար հատուկ կարևորություն ունի արտաքին քաղաքականության առնչվող որոշումների մշակման, պլանավորման և իրականացման օրենսդրական մեխանիզմների ուսումնասիրությունը։ Հանրապետության հոչակումից ի վեր Թուրքիան անցել է զարգացման մի քանի փուլեր, որոնք ունեցել են զարգացման ու առաջընթացի որոշ իշխանափառություն և ներին տրամաբառնություն։ 1924, 1961 և 1982 թվականների սահմանադրությունները, նպաստակ ունենալով կարգավիճել քաղաքական և հասարակական իրավահարաբերությունների համակարգը, անկարող էին շրջանցել նաև արտաքին քաղաքականության ծևագրման և իրականացման մեխանիզմները։ Ցուրաքանչյուր նոր սահմանադրությունը իր հետ թրեց որոշակիություն և հստակություն արտաքին քաղաքականության պլանավորման և իրականացման գործում պատասխանատվության ոլորտների հստակեցման, վերահսկողության մեխանիզմների քաժանման առումներով։

1924 թ. սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն օրենսդիր և գործադիր իշխանությունները պատկանում էին Թուրքիայի Ազգային մեծ ժողովին և կենտրոնացած էին նրա լիազորությունների ներքո։ Եթե առաջինի դեպքում իշխանությունը իրականացված էր ուղղակի կերպով, ապա երկրորդի դեպքում իր կողմից ընտրված նախագահի և կառավարության կողմից¹։ Սահմանադրության 26-րդ հոդվածը կարգա-

վորում էր Ազգային ժողովի այն լիազորությունները, որոնք առնչվում էին միջազգային հոչակագրերի վավերացմանը, այլ պետությունների հետ խաղաղության պայմանագրերի կնքմանը, պատերազմ հայտարարելուն²։ 36-րդ հոդվածի համաձայն թուրքիայի նախագահին էր վերապահված արտերկրությունը իրավայի դիվանագիտական ներկայացուցիչների նշանակման և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների ընդունման իրավունքը։

Երկրորդ համաշխարհայինց հետո, եթե Թուրքիա-Արևմտարևարաբությունները բավական սերտացան, գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև լիազորությունների բաժանարար գծերը շատ հաճախ անտեսվում էին վկայակրչելով ազգային գերակա շահերը։ Օրինակ, հնահիտուցինեալ առումով Թուրքիայի մասնակցությունը Կորեական պատերազմին բավական ուշագրավ էր։ Շրջանցելով սահմանադրությունը՝ գործադիրին ինքնուրույն որոշում կայացրեց՝ զոր ուղարկել Կորեական թերակղզի՝ չնանենալով Ազգային ժողովի համապատասխան լույլությունը։ Նախագահ Բայարի, վարչապետ Մելքոնեսի և արտօգործնախարար Ֆեուար Քյորիկոսի կողմից ներկայացված բացաւրությունների համաձայն, եթե թուրք զինվորականների մասնակցության հարցը ընարկման դրվեր Ազգային ժողովում հնարավոր էր անպատճե բարորություններ առաջանային, որոնք կրանդաղեցնեին գործերի ուղարկման գործընթացը։ Քանի որ Թուրքիայի քաղաքական վերահսկում կար հստակ որոշակ, որ Կորեական պատերազմին մասնակցության պարագայում ՆԱՏՕ-ին անդամակցության հեռանկարները շատ ավելի իրական կինեն, ապա իշխանությունները պատրաստ էին գնալ ցանկացած քայլի։ Ավելին, բուն որոշումը կայացվեց նախագահի, վարչապետի, արտաքին գործերի և պաշտպանության նախարարների, Գյումը շտարի պետի, մամարային, ուղամասային և ուղամանակային ուժերի հրամանատարների Յարվակյան համար գործում։ Մի քանի օր անց կառավարության հաստիկ նիստում պաշտոնական որոշվեց հավաքում առաջարկություն տալ այդ նա-

¹ Սոլիմ տեղում, էջ 91

² F. Ahmad, The Turkish Experiment in Democracy, 1950-1975, Hurst and Company, London, 1977, p. 391

³ General F. Belen, quoted in Mümzaz Soysal, Dış politika ve parlamento, 1964, ss. 201-202; T. Ataov, NATO and Turkey, 1970, s. 170

¹ Ծոված 5-7, 1924 Թուրքիայի Հանրապետության սահմանադրության, առավել մաթրածան՝ E. M. Earle, The New Constitution of Turkey, Political Science Quarterly, Vol. 40, No. 1., 1925, p. 89

խագծին, և թուրքիայի մասնակցությունը Կորեական պատերազմին հաստատվեց կառավարության որոշմամբ:

1961 թ. սահմանադրությունն էլ ավելի հստակեցրեց արտաքին քաղաքականության դրույտում նախագահի, օրենսդրի և գործադիրի իրավունքներն ու պարտականությունները⁵: 1961 թ. չափավոր պատական սահմանադրությունը էական դեր է կատարել երկրի ներքադարձական կյանքի պատականացման ու պազարադարձականացման, մարդու քաղաքական, տնտեսական և տցիալական իրավունքների և հիմնարար պատությունների տրամադրման հարցերում, այն միաժամանակ կարևոր դեր է կատարել նաև պետական ինստիտուտների հետագա կայացման առողջման: Սահմանադրության մեջ ներգրավվեցին մի քանի հոդվածներ, որոնք կարգավորում էին օրենսդրի և գործադիր իշխանությունների փոխարքերություններն արտաքին քաղաքականության մշակման և իրականացման ոլորտներում: Ի տարրերություն 1924 թ. Սահմանադրության՝ 1961 թ. Սահմանադրության հիմքերորդ և վեցերորդ հոդվածները հստակերեն առանձնացնում էին օրենսդրի և գործադիր իշխանությունները: Եցերորդ հոդվածը նշում էր, որ գործադիր իշխանությունը հրականացվելու էր երկրի նախագահի և նախարարների խորհրդի միջոցով՝ օրենքի շրջանակներում: Ի տարրերություն 1924 թ. Սահմանադրության 26-րդ հոդվածի որտեղ համանցիկ նշանը էր միջազգային պայմանագրերի վակերացման համար Ազգային ժողովի ունեցած լիազորության մասին՝ 1961 թ. Սահմանադրության 65-րդ հոդվածը, ոչ միայն ընդարձակ կերպով սահմանում էր այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի Ազգային ժողովի կողմից վակերացման ընթացակարգերը, այլ նաև հստակեցնում դրանց հետագա կիրառման սկզբունքները⁶: Սահմանադրության 66-րդ հոդվածը սահմանում էր, որ քաղաքապետ Ազգային ժողովին էր պատկանում պատերազմի հայտարարման, այլ պետություններում թուրքիայի գինված սոորաքաժանումների տեղակայման և օտար պետությունների գինված սոորաքաժանումների թուրքիայում տեղակայման իրավունքը և հավելում, որ նման թույլտվություն

⁵ S. Balkan, A. E. Uysal and K. H. Karpat (Trans.), Constitution of the Turkish Republic, Ankara, 1961, p. 48.

⁶ Նոյն տեղում, էջ 15:

տրվում է Ազգային ժողովի և Սենատի⁷ համատեղ նիստում: Նոյն հոդվածը նաև հստակեցնում էր այն բացառությունը, որի դեպքում օրենսդրի թույլտվությունը հարկավոր էր: Դա, նախ և առաջ, վերաբերում էր միջազգային պայմանագրերի համաձայն թուրքիայի սոորաքաժանությունների իրականացմանը, որն առաջին հերթին որպես ՆԱՏՕ-ի անդամի պարտականությունների կատարում էր:

97-րդ հոդվածը, 1924 թ. Սահմանադրության 36-րդ հոդվածի նմանությամբ, սահմանում էր պետության գյիշ՝ նախագահի, լիազորությունները արտերկրում թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչների նշանակման և թուրքիայում այլ պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների ընդունման իրավունքը: Ակերպավատ էին նաև միջազգային պայմանագրերի և հոչակագրերի կնքման և վավերացման որոշությունները:

1982 թ. նոյեմբերյան Սահմանադրությունը, որը թուրքիայի գործող մայր օրենքն է, էականորեն տարրեկիում էր նախորդներից թե՛ ծնի, թե՛ բովանդակության, թե՛ վերահսկողության մեխանիզմների առումներով⁸: Զինվորականների վերահսկողությամբ գրված սահմանադրությունը կրում էր զինվորականների կնիքը և հետևում էր որոշակի տրամաբանության: Արտաքին քաղաքականության կազմակերպման և միջազգային հարաբերություններում թուրքիայի շահերի ներկայացման առումներով կարևոր էին 1982 թ. Սահմանադրության մի շարք հոդվածներ: 1982 թ. Սահմանադրության 112-րդ հոդվածի համաձայն կառավարությունը է որոշում արտաքին քաղաքական ուղղությունները և կրում պատասխանատվություն դրանց համար, մինչդեռ ԱՌՆ-ն իրականացնում է այդ որոշումները, ինչպես նաև կատարում առաջարկներ այլլուրանքային քաղաքական ուղղությունների վերաբերյալ⁹: Նախորդ սահմանադրությանների նման՝ օրենսդրին վերապահված էր միջազգային պայմանագրերի վակերացման և պատերազմի հայտարարման, թուրքածրության օտարերկրյա ՀՌՆ-ի ներկայության և արտերկրում թուրքիայի ՀՌՆ-ի տեղակայումների վերաբերյալ որոշումների կայացումը և վերահսկումը:

⁷ 1961 թ. Սահմանադրությամբ թուրքիայի խորհրդարանը երկպալատ էր:

⁸ 1982 Turkish constitution, http://www.ilo.org/wcmsp5/groups/public/-ed_protect/-protrav/-ilo_aids/documents/legaldocument/wcms_127495.pdf

⁹ Թուրքիայի սահմանադրություն, 1982 թ., հոդված 112

Սահմանադրությունամ նշված կարգավիրող ոլորտներից բացի էական էին նաև այն օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավիրումները, որոնք միտված էին առավել կարգավորելու արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման մեխանիզմները: Հատկապես 1980-2000 թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության պահապերման և իրականացման գործընթացներում առաջին անգամ նկատվեցին նախորդ տասնամյակներից էականորեն տարբերվող փոփոխություններ:

Այս տարիներին փոխվեցին նաև հիմնական դերակատարները, թեև ոչ միանգամից: 1920-70-ական թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության պահապերման և իրականացման գործընթացներում արտաքին գործերի նախարարությունից (ԱԳՆ) զատ առանցքային դերակատարում են ունեցել նաև Թուրքիայի Զինված ուժերի Գլխավոր շտաբը, իսկ 1961 թ. հետո՝ Ազգային անվտանգության խորհրդը: Հարկ է նշել, որ կանչված արտաքին քաղաքականության առջև նաև ազագած խնդիրների ընլույշեց և ծրագրերի բազմազանությունից, չափ հաճախ ԱԳՆ-ի հետ միասին արտաքին քաղաքականության իրագործմանը լծվել են թե՝ Էնթրաքտիկայի, թե՝ էկոնոմիկայի, թե՝ առարտի, թե՝ կրթության, թե՝ մշակույթի և թե՝ այլ նախարարությունները: Այսպիսով, 1980-ականներից սկսված Թուրքիայի արտաքին քաղաքականության նախորդ ավանդական մեթոդները, համակարգերն և դերակատարները դաշտադրեն փոխվում էին հիմք հանդիսանալով հետագա տասնամյակներում տեղի ունեցած փոփոխությունների համար:

Անհանունից մակարդակում արտաքին քաղաքականության ոլորտում նախազաները, վարչապետները, արտաքին գործերի նախարարները, ԳԸ-ի պետները և նրանց տեղականները առանցքային ներ են կատարել արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների հրականացման առաջներով: 1923-1950 թթ. ընկած ժամանակահատվածում նախ Մուսաթաֆա Քեմայի, ապա Խմել Խնջոնյով կառավարման ժամանակահատվածներում երկու նախազաներն էլ անձնապես ներգրավված էին արտաքին քաղաքականության հարցերում: Նրանց հեղինակությունը և փորձառությունը էականորեն ազդում էին արտաքին քաղաքականության առնչողությունների կայացման վրա: 1950-60 թթ., երբ իշխում էր Նեմոկրատական կուսակցությունը, արտաքին գործերի նախարարության դերը էականորեն աճեց: Դրա պատճառներն, ըստ Ումուզ

Ուզերի, երկուսն էին, մասնագիտությամբ պատմաբան արտաքին գործերի նախարար Ֆուաթ Քյոփրուպուն, չունենալով դիվանագիտական փորձառություն, գերազանցապես հենվեց ԱԳՆ-ի աշխատակազմի վրա: Այս շշանում գիտլրականությունը երկրորդ պլան էր մշվել՝ գրկավաճ լինելով արտաքին քաղաքականության վրա ներազեցության ճակներից¹⁰:

Հատկապես կարևոր էր 1961 թ. Սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն ստեղծված և հետագա տարիներին առավել նշանակայից դարձած Ազգային անվտանգության խորհրդի գործներությունը: ԱԱԽ-ի յիզօրությունների մեջ էր մունում անվտանգության քաղաքականության համակարգումը և իր առաջարկությունների մասին կառավարությանը տեղեկացնելը¹¹: 1971 թ. հետո ԱԱԽ-ի դերակատարումն ընդլայնվեց, քանի որ որպես դրա գործառույթ սահմանվեց ազգային անվտանգության հարցերի վերաբերյալ կառավարությանը խորհրդակցություն տրամադրելը: ԱԱԽունգության քաղաքականության ընդհանուր համակարգման փոխարժեն ԱԱԽ-ն առավել մեծ ժամանակ էր տրամադրում արտաքին քաղաքականության վերաբերյալ տարրերակների մշակմանը: 1974 թ. Ներխուժումը Կիպրոս ցոյց տվեց, որ ԱԳՆ-ն, ԱԱԽ-ն և 2011 ԳԸ-ն սերտ համագործակցել են տարրեր ոլորտներում: Կիպրոսի հյուսական հատկածի համար ազգային անախաղետականությունը ցոյցաբերեցին նաև հանրությունը, ՀՀ-Ները և քաղաքական կուսակցությունները: 1980 թ. ուղմական հեղաշրջումից հետո ԱԱԽ-ի դիրք էլ ավելի աճեց, որով ամրագրվեց ԱԱԽ-ի կրղմից գործող կառավարությանը տրվող որոշումներին, կարծիքներին, դիտարկումներին տալ առաջանահերթությունը:

1980-ական թթ. քաղաքական դաշտի գլխավոր անձը Թուրքության օօպան էր, ով հիմք դրեց միանգամայն այլ ծիկ ու բռվանդակության արտաքին քաղաքականության մշակման և իրականացման ժամանակաշրջանին: 1920-70-ական թթ. ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական դերակատարների միջև գերեթե հիմնականում եղել է միատարրություն և համաձայնենցված գործողություններ, թեև 1980-ական թվականների վերջին և 1990-ականներին արտաքին և

¹⁰ U. Uzer, Identity and Turkish Foreign Policy: The Kemalist Influence in Cyprus and the Caucasus, London, I. B. Tauris, 2010, p. 77.

¹¹ S. Balkan, A. E. Uysal and K. H. Karpat, նշվ. աշխ. հոդված 111.

պաշտպանական քաղաքականության հիմնական դերակատարների միջև տարակարծությունները և հարցերությունների կորուկ վատարացանամները, մեկնելու նկատմամբ վերահսկողության սահմանման դրսուրումները դարձան առավել տարածված: Հետևաբար, փոխվեցին նաև արտաքին քաղաքականության երթեմնի մասարդության և համաձայնեցված գործնեության նախկին մեխանիզմները:

Այս տասնամյակում ավելացան նաև այնպիսի դերակատարներ, որոնք նախկինում կամ չկային կամ ուժին ոչ այնքան առանցքային դերակատարում: Այս առումով կարևոր էր 1990-ականների սկզբներին հիմք դրված նավայակին ծրագրերի մեջնարկը, որը առաջնային պայմ մղեց Թուրքական վառելիքային կազմակերպությանը (TPOA), վառելիքամշային կազմակերպությանը (BOTAS): Այս կազմակերպությունները սկսեցին ակտիվորեն ներգրավվել հատկապես Ադրբեյջանի և Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ 1990-ական թթ. արտաքին քաղաքականության ռազմավարական ուղղությունների մշակման գործընթաց:¹²

Թուրքիայի ԱԳՆ-ի ներքին կանոնադրության 1173-րդ հոդվածը նշում է, որ արտաքին քաղաքականության համակարգում դրված է ԱԳՆ-ի վրա, սակայն, ինչպես ցոյց տվեցին 1980-1990-ական թթ., արտաքին քաղաքականության որոշ ուրոտներ ԱԳՆ-ն անկարող էր համակարգել ըստ անհամաժամկետության: Այսիսկուի, ոչ պետական դերակատարները, ինչպես օրինակ թիգնեն հանրությունը, արհեստագույքական միությունները, համաստրանները, ՀՀԱ-ները և հանրային կարծիք ժամանակ առ ժամանակ էական ազդեցություն են ունենում արտաքին քաղաքականության առնչողություն որոշումների կայացմանը:¹³

1987 թ. Թուրքության սկսեց առավել ակտիվորեն ներգրավվել արտաքին քաղաքականության մշակման և իրավանացման հարցերում: 1989 թ. հետո, երբ նա ընտրվեց նախագահ, արտաքին քաղաքականության հարցերում, ըստ էության, գինվորականությանը մղեց լուսանցքային դաշտ: Ավելին, 1989-91 թթ., ունենալով Մեսոպ Յըլմազի աջակցությունը, Օզալը աննախարհեակ ակտիվություն ցուցաբերեց արտաքին քաղաքա-

կանության գործներացներում: Թուրքիան առանցքային դերակատարում ունեցավ Ծոցի պատերազմի ընթացքում, որի փաստը ինքնին առաջ թերեւ գինվորականության խիստ արձագանքը: Արդյունքում, գերազանցապես արտաքին քաղաքականության հարցերում ունեցած տարբերության պատճենով, ԶՈՒ Գյուղական շտաբը շտաբի պետ Թորումթայը հրաժարական ներկայացրեց, որն աննախարհեակ իրադարձություն էր Թուրքիայում: 1991 թ. ընտրություններում Օզալի կողմից երթեմնի ղեկավարած Մայր հայրենիք կոսակցությունը պարտություն կրեց, և վարչական դրանք Դեմիրիքի քաղաքական թեմերը բավական սահմանափակեց Օզալի միանձնյա կառավարման դրսուրումները: Օզալ-Դեմիրիք քաղաքական հակասությունների հետևանքով՝ արտաքին քաղաքականության հարցերում Օզալի ճակները նվազեցին: Դա առավել ցցուն դարձավ 1991-93 թթ. ընթացքում, երբ Դարրաբայան հակամարտության վերաբերյալ Թուրքիայի ունեցած դիրքորոշման դրսուրումները տարբերվում էին 1989-91 թթ. արտաքին քաղաքականության այլ համարձակ նախաձեռնություններից: Օզալ-Դեմիրիք հակասություններից օգտվեց նաև գինվորականությունը և, հատկապես 1993 թ. ապրիլի հետո, երբ Օզալը հանկարծան եղավ, գինվորականները սկսեցին վերապնդել նախկին ճակները և ընդգծված ակտիվություն ցուցաբերու ոչ միայն ներքաղաքական, այլ նաև արտաքին քաղաքականության մշակման և իրականացման հարցերում¹⁴: Դրա պատճառները մի քանիսն էին, որոնցից առավել կարևոր էին ներքաղաքական անկյունի իրավճակը, աշխարհիկ-հյուսական գաղափարախոսությունների միջև խորացող հակամարտությունը, ՔԲԿ-ի դեմ ահազնացող պայքարը, Ֆինանսատեսական ճգնաժամային դրսուրումները, իրարահաջորդ կույցիցին կառավարությունները, որոնք կառավարությունների ղեկավարներին հնարավորություն չին տալիս արտաքին քաղաքականությանը ամրողական ուշադրություն հատկացնել:

1990-ական թթ. առաջ եկան նոր էթնիկ ու ազգային լրինգային խմբեր ևս (աղբեջանական, բռնիական, չեղենական և այլն), որոնք նախկինում գրություն ցունեին: Այս առումով Թուրքիայի արտաքին քաղաքականությունը հետխորհրդային տարածքում (Ադրբեյջան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդո-

¹² F. Tayfur and K. Göymen, Decision Making in Turkish Foreign Policy, Middle Eastern Studies, 2002, v. 38. No. 2, p. 108.

¹³ U. Uzer, Նշվ. աշխ., էջ 76:

վայ), Ռումինիայում, Ռուսաստանում, Ջինաստանում, Բուլղարիա բականյան ուղղություններում սկսեց կրել նաև նորաստեղծ էթնիկ լրինգային խմբերի ազդեցությունը, որը նոր երևոյց էր Թուրքիայի արտաքին քաղաքականության կազմակերպման տեսանկյունից: Ինարկե, էթնիկ հիմքերով գործող լրինգային խմբերից ոչ բոլոր ունեցան այնպիսի հաջողություն ինչպիսին ադրբեջանական էր¹⁵: Պատերազմական գործողությունների հենց սկզբից՝ 1992 թ. հունվար-փետրվար ամիսներին, Թուրքիայում հանրային կարծիքը շատ արագ դարձավ ընդգծված հականական¹⁶: Այլ խոսքերով, ադրբեջանական էթնիկ լրինգային խմբերը, ինչնելով թուրքերի հետ ունեցած մշակութային և էթնիկ ընդհանուրությունների վրա, կարողացան ծևափորի միավորմանի հանրային կարծիք, որն էլ է եաւս ազդեց իշխանական վերնախավի վրա ընդհանրացես, և Արցախյան հականարության նկատմամբ Թուրքիայի դիրքորոշման հարցում մասնավորացես: 1992 թ. փետրվարին Խոջալով կրակակետերի վերացման ժամանակ տեղի ունեցած դեպքերը և Աղդամի մատուցներում սպանված խոջալով թևակիշների և հատկապես թուրք-մեսխեթների պատմությունը Թուրքիայում տարածվեց գերազանցապես համաձայն ադրբեջանական քարոզական մեջ ներկայացրած շեշտադրությունների¹⁷: Պաշտոնական Անկարական դատապարտեց նաև Շոշիի և Բերձորի ազատագրումը, սակայն Թուրքիայի քայլերը Հայաստանի հասցեին հնչող տոր քննադատական հայտարարություններից այն կործ չանցաւ: Ազդրեցանի կողմից լայնածավալ հարձակման ժամանակ Թուրքիան հականավիրոն հանդես չեկավ ոչ մի հայտարարությամբ: 1993 թ. Քարվաճանի գործողությունը դարձավ այն եղրագիծը, որից հետո Թուրքիայի իշխանություններն անկարող եղան սահմանափակվել բացառապես կոչու քննադատությամբ: Հանրային ճնշման ներք Թուրքիան անցավ վճռական գործողությունների և վերջնականպես փակեց Հայաստանի հետ սահմանի գործող երկու սահմանակետերը, որոնք գործում էին հատուկ նեժիմով՝ 1991թ. ի վեր:

¹⁵ Նոյն տեղում, էջ 35:

¹⁶ U. Uzer, Նվկ. աշխ., էջ 172-173:

¹⁷ Վ. Տեր-Մաթևոսյան, Խոջալովի դեպքերը ադրբեջանարության հարաբերություններում: Գնահատումներ Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից, Աշխատանքային տետրեր, 2009, հ 2, թ. 10, էջ 103-114:

Տարիներ անց նոյնպես, եր 2008-2009 թթ. Շվեյցարիայի միջնորդությամբ փորձ արվեց կարգավորելու հայ-թուրքական հարաբերությունները, Թուրքիայի հանրությունը նախապես լինելով դրական տրամադրված շեշտավորելն փոխեց վերաբերմունքը Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցի վերաբերյալ, եր ադրբեջանական քաղաքական և արդեն տնտեսական լրինգային խմբերը լայնածավալ հարձակում սկսեցին Թուրքիայում: Այլ կերպ, թուրքական ՀՀ-Ների, քաղաքացիական հասարակության, փորձագիտական հանրության արտաքին քաղաքականության վրա ունեցած ազդեցությանը 1990-ին ավելացան էթնիկ ազդեցության խմբերը, որոնք, ինչպես ադրբեջանական պարագան ցոյց տվեց, ունեին մի քանի ենթամշեր (քաղաքական, տնտեսական և մշակութային), որոնք էլ 1990-2000-ական թթ. համացանց տարածմանը գույքահետ դարձավ առավել կարևոր գործոն արտաքին քաղաքական այս կամ այն հարցի շուրջ հանրային կարծիքը համարելու համար:

1993 թ. ի վեր Նախագահներ Սովեյման Դեմիրելը, Ահմեդ Նեշիթե Անգերը և Արդիլյան Գյուլն ունեցել են արտաքին քաղաքականության մեջ ներգրավման տարաբնույթ ծևաչափեր: Թե՛ Դեմիրելը, թե՛ Գյուլը բավական ակտիվորեն ներգրավված են եղել արտաքին քաղաքականության իրականացման գործում, մինչդեռ Ահմեդ Նեշիթե Անգերը բավական պասիվ էր արտաքին քաղաքականության հարցերում: Դեմիրելը, որը երկիր նախագահն էր մինչև 2000 թթ., ուներ բավական զգայի քաղաքական փորձ: Դեռ 1960-ական թթ. ակտիվ քաղաքականության մեջ կարևոր հետաքիծ թղած Դեմիրելը 7 անգամ եղել է վարչապետ, հետևաբար նա ձգտում էր առավելացնելու միատեղելի վարչապետության նախկին փորձը և նախագահի լիազորությունները: Դրան գումարվում էին նաև ներքադարձական անկայունության ալիքները, որոնք հնարավորություն տվեցին, որպեսզի նախագահը և ներգրավվի ակտիվ քաղաքականության մեջ: Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Անգերը, որը նախագահեց մինչև 2007 թ., ակտիվ քաղաքականության մեջ նորելով էր, չը տիրապետում արտաքին քաղաքականության այլ փորձին, որը ունեին նրան նախորդական դերը երկու նախագահները: Մինչդեռ 2007 թ.-ից նախագահ դարձած Արդ. Գյուլը ապրել էր արտերկրում, ուներ արտաքին տնտեսական գործակցության փորձ: Ավելին, լինելով Բարորություն կուսակցության անդամ, 1996 թ. Գյուլը գրադեցրել էր

Թուրքիայի օրենսդիր մարմնի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Հանրային կարծիք ևս, ոչ հաճախ, սակայն որոշ դեպքերում բավական առանցքային դեր է ունեցել արտաքին քաղաքական գաղղաքությունները միշտ չեն, որ հաշվի են նստում հանրային կարծիքի հետ, սակայն, որոշ դեպքերում, հատկապես ընտրությունների ժամանակ հասարակությունը որոշակի վերաբերմունք էր դրսուրում արտաքին քաղաքական խնդիրների վերաբերյալ:

Վերջին տարիներին Թուրքիայի արտաքին քաղաքական ուժության ձևափորման գործում կարևոր դերակատարում են ստանձնել նաև գիտահետազոտական ինստիտուտները, վերլուծական կենտրոնները (*think-tanks*)¹⁸, որոնք գործում են կամ արտաքին գործերի նախարարության կամ համայնքարանների հովանու ներքո: Այս կենտրոններից շատերը եվրոպայի քաղաքական և տնտեսական կենտրոններում և Կաշշինգունում ունեն ներակայացնցորդուններ, որոնք ակտիվ մասնակցություն են ունենում Թուրքիայի վերաբերյալ գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացմանը¹⁹:

Թուրքիայի դուռը ապրող թուրքերը և Թուրքիայի քաղաքացիները ևս 1960-70-ականներից սկսած էական ազդեցություն են ունեցել Թուրքիայի արտաքին քաղաքականության իրենց բնակչության երկրների վերաբերյալ քաղաքականության մշակման և իրականացման գործում: Օրինակ, Եվրոպայում ապրող թուրքերն սկսել են ավելի ինտենսիվ կերպով ներգրավվել Թուրքիայի հետ հարաբերություններում, առաջ մինչ Թուրքիայի շահերը, թեև ոչ բոլոր երկրներում է դա ստացվում: Օրինակ, հակառակ այն համընդհանուր պնդմանը, որ Գերմանիայում ապրող Թուրքիայի քաղաքացիները ներկայացնում են Թուրքիայի շահերը, նպաստում են Թուրքիայի քաղաքական օրգակարգի առաջմղմանը, իրականում, Գերմանիայում ապրող

¹⁸ S. Larrabee & I. Lesser, Խվ. աշխ., էջ 32:

¹⁹ Այդիմիտ վերլուծական կենտրոններից են OSRAM (Մերձավոր Արևելյան ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոն), STRATIM (Ռազմավարական հարողության կենտրոն), EPC (Ելեկտրոսան քաղաքականության կենտրոն), SAM (Ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոն), IPC (Ստամբուլ քաղաքական կենտրոն), SETA (Քաղաքական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ), TESEV (Թուրքիայի տնտեսական և սոցիալական ուսումնասիրությունների հիմնադրամ):

և հասարակական-քաղաքական կանքում ակտիվ Թուրքիայի ներկա կամ նախկին քաղաքացիները գերազանցապես քրեակ են, այսինքն, կամ քուրդ-ալիներ, իսկ թուրքերի մեծ մասն էլ թևադատական մոտեցում ունի Թուրքիայի հշևանությունների նկատմամբ: Այս առումով փոխվել են նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության Սփյուրքի հետ տարվող աշխատանքները: Օրինակ, 1970-ականներից ի վեր, Թուրքիան մզկիթների սպասավորները էր ուղարկած Եվրոպա՝ մզկիթներում աշխատելու և կրթնական ծառայություններ մատուցելու համար, 1990-ական թթ.-ից սկսած առավել ընդլայնվեցին թե՛ գործառության, թե՛ աշխարհագրական առումներում: Կրոնի գործերի վարչությունը, որը գործում է վարչակենություն, դարձել է Թուրքիայի ամենամեծ բյորուկանական ինստիտուտը, քանի որ դրա աշխատակիցները համարվում են պետական ծառայություններ և արտերկրության կրոնական գործերի կարգավորման հետ միասին համակարգում են նաև այլ, գերազանցապես եվրոպական տվյալ քաղաքությամբ, մարզում ապրող համայնքի գործներությունը, հորդրում գրադարձ թուրքանպատ գործունեությամբ, ընդլայնել քաղաքական ներկայացվածությունը բնակության երկրներում և այլն: Եվրոպայում բնակություն հաստատած թուրքերից բացի էական նշանակություն էր տրվում Իրաքում, Միհրայում ապրող թուրքներների հետ տարվող աշխատանքներին, որոնք դառնում էին նաև ճակ Թուրքիայի հշևանությունների ծերուերում այդ երկրների հետ հարաբերությունների կարգավորման ժամանակ:

Գյովենական կրթահամայինները ևս էական դերակատարում են ունեցել Թուրքիայի արտաքին քաղաքականության «մեղմ ուժի» քաղադրիչ տարածման գործընթացում: Իհարկե, ժամանակ առ ժամանակ Ֆեթ. Գյուլենի և Թուրքիայի իշխանական քաղաքական վերնախավի միջև ծագել են հակասություններ, սակայն, ընդհանուր առմամբ, այդ կրթահամայինների շրջանավարտները դառնում են լեզվի կրողներ, համարվում են թուրքական արժեքային մզկունքների ջատագովներ: Այդ կրթահամայինների շրջանավարտները աշխատանքի շուկայությունը ավելացնում են նաև ներկայացվածությունը քաղաքական համակարգի տարրեր ոլորտներում: Գյուլենականները ներթափանցել էին նաև իրավական համակարգ, գիլման ուժեր, արտաքին քաղաքական գերատեսչություն՝

փորձելով ազդել Թուրքիայի արտաքին քաղաքականության որոշումների կայացման գործընթացի վրա:

Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունը տասնամյակներ շարունակ կենտրոնական դեր է կատարել ոչ միայն արտաքին աշխարհում Թուրքիայի շահերի ներկայացման, այլ նաև՝ ներպետական կյանքում: Տասնամյակներ շարունակ դիվանագիտական կորպուս բոլոր բարձրաստիճան գիրվորականների, դառահրավական համակարգի մոտավորական ներկայացուցիչների հետ միասին համարվել է բնայական վերնախավը: Ավելին, տասնամյակներ շարունակ արտաքին գործերի նախարարությունը Թուրքիայի քաղաքական և իշխանական համակարգում մշտապես ընկապվել է որպես «ընտրավային հաստատություն», «ընտրախավ ընտրախավի մեջ», «բյուրոկրատական կատարելության կետորոն»: ԱԳՆ-ն համարվում է նաև դժվար հասանելի հաստատություն, քանի որ այն ուներ նաև ամենադժվար ընդունելության ընտրությունները: Երկար տարիներ Թուրքիայի միայն մեկ բուհ՝ Անկարայի համալսարանի շրջանավարտները կարող էին մասնակցել ԱԳՆ-ի ընդունելության ընտրություններին և անցնել դիվանագիտական աշխատանքի: Տասնամյակներ շարունակ հստուկ ուշադրություն է հաստկացվել նաև դիմորդների ընտանելիան պատմություններին: Ինչպես գիտվորականության պարագայում ԱԳՆ-ում ևս պահանջում էին դիմորդների ընտանելիան լրացնակարները սպուտնիկ համար, թե արդյոք դիմորդների ընտանիք ալտամանները ենել են կրոնական հավատացյալներ: Համընդհանուր համոզմններ նաև այն էր, որ դիվանագիտությունը և կրոնամոլությունը անհամատելի են: Բյուրոկրատական ապարատի համար այս հանգամանքն ուներ էական նշանակություն, դիվանագիտները, դեսպանները համարվում էին բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք գործադրում էին օսմական ժամանակահատվածից ժառանգած աշխատանք:

Տասնամյակներ շարունակ արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում կիրառված մեխանիզմներին վերջին տարիներին ավելացան նորերը: Այս հանգամանքը շնորհիկ արտաքին քաղաքականության իրականացման գործակազմը դարձավ առավել բազմազան: Այդ առողմանը հարկ է առանձնացնել արտաքին առաջարկությունը գործությունը որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք գործադրում էին օսմական ժամանակահատվածից ժառանգած աշխատանք:

Թուրքիային պետություն»²⁰: Եթե 1975 թ. արտաքին առևտուրը կազմում էր Թուրքիայի ՀՀ-ի ընդամենը 9 %-ը (6.1 մլրդ. ԱՄՆ դոլար), ապա 33 տարի անց՝ 2008 թ., այն ավելացել էր ավելի քան 5 անգամ, հասնելով 42 %-ի (333 մլրդ. ԱՄՆ դոլար)՝ ի հավելում առևտուրին գործունեության՝ պակաս նշանակայից չեն նաև բուրգական բիզնես կազմակերպությունների գործունեության ընդհանությ և արտաքին ուղղակի ներդրումների ծավալների շեշտակի աճը: Առաջինի առողմանը հարկ է նշել, որ 1972-2010 թթ. ընկած ժամանակահատվածում բուրգական 5900 կազմակերպությունների կողմից արտերկրում իրականացրած ծրագրերի ընդհանուր գումարը կազմում է 187 մլրդ. ԱՄՆ դոլար, իսկ արտաքին ուղղակի ներդրումների ծավալը 2001 թ. 890 մլն. ԱՄՆ դոլարից 2009 թ. հասել էր 5.3 մլրդի²¹:

Թուրքիայի արտաքին քաղաքականության բազմազանեցմանը նպաստող գործուներից էին նաև դեպի Թուրքիա մարդկանց այցելությունների թվի աճը: Եթե 1991 թ. անհամար հարևան երկրներից Թուրքիա մուտք էր գործել ընդհանունը 2,5 մլն մարդ, ապա 2010 թ. այդ թվով հասավ մոտ 11 մլն-ի: Դեպի Թուրքիա մարդկանց այցը խթանող գործուներից էր Թուրքիայի կառավարության կողմից մոտքի արտոնագրերի ազատականացման քաղաքականության կիրառմանը և ազատ առևտուրի գոտիների գործարկությը²²: Այս քաղաքականության շնորհիկ արտաքայթի բարձր ցուցանիշներ ունեցող երկրից Թուրքիան վերածվեց ներգաղթյան երկրի: Արդյունքում, Թուրքիա տեղափոխված մարդկանց մեծ մասը, ներգալված յներկով զանազան ծառայությունների ոլորտներում, իրենց ծագման երկիր մկնեցին ուղարկել դրամական փոխանցումներ, որոնց ծավալները ևս էական աճել են վերջին տարիների ընթացքում: Մարդկանց տեղաշարժին նպաստող գործուներից է նաև տորիզմի ենթակառուցվածքային զարգացումը: Հիշյալ գործուների համարմաքը է պայմանավորված այս հանգամանքը, որ 2014 թ. Թուրքիան վեցերորդն էր աշ-

²⁰ Kemal Kirişci, The Transformation of Turkish Foreign Policy: The Rise of the Trading State, New Perspectives on Turkey, 2009, v. 40, pp. 29-57.

²¹ Kemal Kirişci, Turkey's Engagement with its Neighborhood: A "Synthetic" and Multidimensional Look at Turkey's Foreign Policy Transformation, Turkish Studies, 2012, v. 13, n. 3, p. 321.

²² Նոյն տեղում, էջ 322:

²³ Նոյն տեղում, էջ 322-323:

խարիստ ամենաշատ այցելությունների թվով՝ 37,8 մն. այցելու, որը 5,9-ով պահելի էր քան 2013 թ.²⁴

Տնտեսական ազդեցության աճին զուգահեռ Թուրքիայի իշխանությունները առանձնահատուկ կարևորություն են հատկացրել կրթական, կրօնական, մշակութային ու հումանիտար քաղաքականությանը և հասարակական մակարդակում Թուրքիայի վերաբերյալ արտերկրության դրական վերաբերմունքի ծևավորմանը։ Տասնյակ երկրներում Թուրքիայի կառավարությունը սկսեց ծևավորել կրոնագաղափարական և մշակութային ազդեցության տարածման ճականը, որոնց աշխատանքները համակարգում են Թուրքիայի վարչապետին կից երեք պետական հաստատություններ՝ «Համագրդակողության և համակարգման թուրքական գործակալությունը» (*Türkiye İstirlikü ve Kalkınma İdaresi - TIKA*)։ «Յունաս Էմբէ մշակութային կենտրոնները» և Կրոնի գործերի նախագահությունը (*Diyanevi*)²⁵։

TIKA-ն ծրագրեր է իրականացնում 48 երկրներում գործող 50 գրասենյակների միջոցով։ 2002 թ. մինչև 2011 թ. իրականացվող ծրագրերի ըստոցն աճել է 14 անգամ՝ 85 մն. ԱՄՆ դոլարից հասնելով 1,273 մլրդ.-ի։ Այն իրականացնում է հումանիտար, կրթական և տեխնիկական-տեղեկատվական աջակցություն մեծ թվով երկրների գերազանցական համաշարական համայնքներու։ Թուրքիայի իշխանությունները 2007 թ. որոշեցին հիմնել «Յունաս Էմբէ թուրքական մշակութային կենտրոնները», որոնց նպատակն էր համաշարականություն, որոշ առումով փոխարինել գյուղնական դպրոցների ազդեցությունը՝ հետևելով գերազանցական լեզվի, գրավանության, Թուրքիայի պատմության, մշակույթի և արվանդի տարածման նպատակ։ Այս կենտրոնները ստեղծվել են Գյութի ինստիտուտի, Թիրտանական խորհրդի, Սերվատսեսի ինստիտուտի և նմանատիպ այլ հաստատությունների օրինակով²⁶։ Ներկայում այն 33 երկրներում գործում են առաջատար գործականության կամաց առաջատար պետական հաստատություններ։

²⁴ The world's most visited countries – 2014, <http://www.telegraph.co.uk/travel/travelnews/11027765/The-worlds-most-visited-countries-2014.html?frame=3003408>

²⁵ Առավել մականաս տես՝ Kerem Öktem: Projecting Power: Non-conventional Policy Actors in Turkey's International Relations in Another Empire? A Decade of Turkey's Foreign Policy under the Justice and Development Party, eds. Kerem Öktem, Ayse Kadioglu and Mehmet Karsli, Istanbul, Bilgi University Press, 2012, pp. 77-108.

²⁶ Ahyan Kaya, Yunus Emre Cultural Centers: The AKP's Neo-Ottomanism and Islamism, <http://www.tr.boell.org/web/51-1725.html>

բում ունի գործող գրասենյակներ²⁷։ Երրորդ պետական հաստատության՝ Կրոնի գործերի անհազարհոլյան (ԿԳՆ) գործունեությունն արտերկրության ընդգրկում է մի քանի դրուտներ, որոնք գերազանցական առնչվում են կրոնական և հոգևոր խնդիրներին։ ԿԳՆ-ն տրամադրություն է օգնություն դափնի Մերքառության կազմակերպման, մզկիթներում քարոզիչների խմաների ուսուցման, աստվածաբանների պատրաստման, հետքուհական կրթության նպատակով կրթաթշակների տրամադրման, համակարգում է նաև մզկիթների վերաբերության, որում կառուցման գործունք ֆինանսական և խորհրդադատական օժանդակության տրամադրությանը։

Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքանացման գործունք վերջին տարիներին ոչ պակաս կարևոր դերակատարություն են ստանձնել ոչ-կառավարական կազմակերպությունները, որոնք սերտորեն համագործակցում են պետական հաստատությունների հետ և գործունք միևնույն քաղաքականության ձիրում։ Վերջիններին գործունեության ոլորտներն ընդգրկում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են Թուրքիայի առևտրատնտեսական և բիզնես շահերի խթանմամբ և երկողմ ու քազմակողմ հարաբերությունների զարգացումը, թուրքերն իզզվի և թուրքական մշակույթի խթանմամբ, մի շարք երկրներում ժողովրդավարության և բարեփիսուների օրակարգի մշակումը, հումանիտար աջակցությունը, կանանց իրավունքների պաշտպանությունը և այլն։ Այս կազմակերպությունների գործունեության ֆինանսական, տնտեսական և խորհրդատվական հիմնական շահառությունը Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի, Բականական և Հեռավոր Արևելքի տարածաշրջանների խմանադատական շրջաններն ու համայնքներն են։ Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Թուրքիայից դուրս ակտիվ գործունեություն ծավալած ոչ-կառավարական կազմակերպություններից մի քանիսին՝ ըստ գործունեության ոլորտների։

²⁷ Yunus Emre Enstitüsü - <http://www.yee.org.tr/>

²⁸ Şenol Korkut, The Diyanet of Turkey and Its Activities in Eurasia after the Cold War, Acta Slavica Iaponica, 2010, Tomus 28, pp. 117-139

| Գործունեության ոլորտը | Կազմակերպության անվանումը | Գործունեության վերաբերյալ մանրամասներ |
|---------------------------------------|---|---|
| Բիզնես և առևտարաննեաս կան կապեր | Անկախ արդյունաբերող-ների և գործարանների ընկերակցություն (MUSIAD - Müstakil Sanayici ve İşadamları Derneği) ²⁹ (հիմն. 1990 թ.) | Ներկայացուցական գրասենյակներ ունի 32 երկրներում: Հաս-կաթե ընդայնված է Գերմանիայում գործող ցանցը, որը ներկայացուցիչներ ունի 10 քաղաքում: |
| | Թուրքիայի արտաքին տնտեսական հարաբերությունների խորհրդ (DEİK - Dış Ekonomik İlişkiler Kurulu) ³⁰ (հիմն. 1986 թ.) | Ներկայացուցակություններ ունի 121 երկրում, որոնք գործում են «թգնես խորհրդ» անվան ներքո: |
| | Թուրքիայի արտա-հանողների համադուռը (TİM - Dış İhracatçılar Meclisi) ³¹ (հիմն. 1993 թ.) | Միավորում է արտա-հանման միտքած թուրքական 52,000 կազմակերպությունների համաձայն 26 ոլորտների: Նպաստական է խթանել համակարգման ծավալները՝ 2023 թ. հասցնելով 500 մլրդ. ԱՄՆ դրամի (2010 թ. 135 մլրդ. ԱՄՆ դրամից): |
| | Թուրքական առևտրային պալատների և բրաս-ների միություն (TOBB - Türkiye Odalar ve Borsalar Birliği) ³² (հիմն. 1950 թ.) | Նպատակն է խթանել մասնավոր հաստիածի գործունեությունը: Գրասենյակներ ունի մոտ 20 առաջատար միջազգային և |

²⁹ Müstakil Sanayici ve İşadamları Derneği <http://www.musiad.org.tr/tr-tr>³⁰ Dış Ekonomik İlişkiler Kurulu - <http://www.deik.org.tr/>³¹ Dış İhracatçılar Meclisi - <http://www.tim.org.tr/tr/default.asp>³² Türkiye Odalar ve Borsalar Birliği - <http://www.tobb.org.tr/Sayfalar/Ana-Sayfa.php>

| | | |
|--|---|---|
| | | ազգային առևտրային կազմակերպություններում: |
| | Թուրքական արդյունաբերողների և գործարանների ընկերակցություն (TUSIAD - Türkiye Sanayiciler ve İşadamları Derneği) ³³ (հիմն. 1971 թ.) | Միավորում է արդյունաբերողների և գործարանների ընկերակցություն (TUSIAD - Türkiye Sanayiciler ve İşadamları Derneği) ³³ (հիմն. 1971 թ.): Ներկայացուցական գրասենյակներ ունի Բրյուսելում, Վա-շինգտոնում, Բեռլինում, Փարիզում և Պեկինում, ինչպես նաև անդամակցում է մի շարք միջազգային առևտրառնեասկան կազմակերպությունների: |
| | Հումանիտար աջակցություն | Գրասենյակներ աշխարհի 135 երկրներում: Ծառայությունների մակարդակը գրանցույթային կիրառության, սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտներում: Դպրոցների, ինվանդանությունների կառուցման և վերականցում, տարրեր երկրներում ապրող մատուցմանների վերաբերյալ զեկույցների պատրաստում: |

³³ Türkiye Sanayiciler ve İşadamları Derneği - <http://www.tusiad.org.tr/>

| | | |
|----------------------|--|--|
| | Կապույտ կիսալրամի աշակեցույթան և զարգացման հիմնադրամ (Uluslararası Mavi Hilal Insani Yardim ve Kalkınma Vakfı) (հիմն. 1999 թ.) | Համայնքային զարգացման, բնակչութեան և առողջապահական ծրագրեր է իրականացնում 11 երկրներում: |
| Կրթական | Մոր և մանկան կրթական հիմնադրամ (ACEV - Anne Çocuk Eğitim Vakfı) ³⁴ (հիմն. 1993 թ.) | Կրթական ու վերապարտաստման դասընթացներ է իրականացնում Եվրոպայի և Մերձավոր Արևելյան 12 երկրների կարիքավոր ընտանիքների երեխների և կանանց համար: |
| Կանանց հիմնաժողովներ | Կանայք հանուն կանանց մարդկային իրավունքների (Kadının insan hakları) ³⁵ (հիմն. 1993 թ.) | Կանանց իրավունքների պաշտպանության իրականացման համարական պետություններում: |

«Փափուկ ուժի» միջոցով իրականացվող արտաքին քաղաքականության գործընթացում վերջին տարիներին կարևոր դեր է կատարում նաև համրայի մշակույթը: Որոշ ուսանասիրողների կարծիքով Թուրքիայում նկարահանված և աշխարհի մոտ 100 երկրում ցուցարված հեռուստասերիալները ոչ աղքա马上 կարևոր աղղոթություն են թողել Թուրքիայի աղղոթության տարածման գործում³⁶: Այդ ոլորտում կատարված աշխատանքի և պետության աջակցության շնորհիվ Թուրքիան դարձավ հեռուստասերիալներ արտահանող երկրորդ երկիր՝ զիջելով միայն ԱՄՆ-ին: Միայն 2012 թ. հեռուստասերիալների դարձավ աղքա马上 ստացված եկամուտը կազմել էր 200 մլ.

³⁴ Anne Çocuk Eğitim Vakfı, <http://www.acev.org/>.

³⁵ Kadının insan hakları, <http://www.wwhr.org/>.

³⁶ Kerem Oktem, Projecting Power: Non-conventional Policy Actors in Turkey's International Relations, in Another Empire: A decade of Turkey's Foreign Policy Under the Justice and Development Party, ed. Kerem Oktem, Ayşe Kadioğlu and Mehmet Karlı, İstanbul, İstanbul Bilgi University Press, 2012. pp. 98-101.

ԱՄՆ դոլար, որը 2004 թ. կազմում էր ընդամենը 10,000 ԱՄՆ դոլար³⁷: Հատկապես, Հյունիք (Մերձավոր Արևելյան «Noor», իսկ Բուղդայիայ «Perla»), «Օսմանցի փեսան» (Yabancı Damat), «Հազար ու մի գիշեր» (Birbir Gece) «Ezel», «Menekşe ile Halil», «Fatmagül», «Բախու» (Kismet), «Կյանքը շարունակվում է» (Haya Devam Ediyor), «Հրաշայի դարը» (Muhitesem Yüzyıl) հեռուստասերիալները Մարոկոյից մինչև Մալազիա ապահովել են մեծ հեռուստայարան, որոց դեպքերում հասնելով մինչև 200 մլն. հեռուստադիտողի: Ուստինասիրողների կարծիքով, որոշ հեռուստասերիալներ հեղափոխական դերակատարում են ունեցել արարական աշխարհում ընտանեկան և մարդկային հարաբերությունների վրա, ինչպես նաև կանանց իրավունքների վրային աղքա马上 առումով, դրանով հանդերձ խթանելով Թուրքիայի, թուրքական մշակույթի և թուրքական նմունականի վերաբերյալ դրական ընկալման ծևագործականը³⁸:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱԲԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՓԱՐԱԿՈՍԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՅԱՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2002-2012 թթ.

2002 թ. նոյեմբերյան ընտրություններում հաղթեց Արդարություն և զարգացում կուսակցությունը, որը հիմնադրվել էր ընդամենը 14 ամիս առաջ: Կոսակցությանը հաջողվեց ստանալ ըվեների 34 տոկոսը, որն անսահմատեաց ցուցանիշ էր 1990-ական թթ. կույիցիոն կառավարությունների համատեքստում: Նոր իշխանության առաջնային նպատակներից մեկը դարձավ եկամուտական և արևմտյան գործնկերին վաստակեցնել, որ Թուրքիայի արտաքին քաղաքանության մեջ էական շղաղաքաներ չեն սպասվում, ավելին, Թուրքիան շարունակելու է մասի ելլամիջայն անդամակցության հավատարիմ պետություն և շարունակելու է իր ստանձնած պարտականությունների իրականացումը: Կարչապետի պարտականությունը ստանձնեց Արդարական Գյուղը, մինչև Էրդողանը՝ կոսակցության իրական ստանձնորդը, կտանձնեց կառավարության ղեկը 5 ամիս անց:

³⁷ Turkey world's second highest TV series exporter after US, <http://www.hurriyetdailynews.com/turkey-worlds-second-highest-tv-series-exporter-after-us.aspx?pageID=238&nID=73478&NewsCatID=345>.

³⁸ Kismet: How Soap Operas Changed the World, <http://www.aljazeera.com/programmes/witness/2013/11/kismet-how-soap-operas-changed-world-20131117152457476872.html>.

Գյովի ղեկավարած կառավարությունում արտաքին գործերի նախարարի պաշտոնը վստահված էր Յաջար Յաքըջին: Էրդողանի վարչապետ դառնարու հետո Արդ. Գյովի նշանակվեց արտգործնախարար և փոխվարչապետ: Ա. Գյովի պաշտոնավարեց մինչև 2007 թ. օգոստոս ամիսը, երբ Թուրքիայի օրենսդիրի կողմից ընտրվեց նախագահ: Արտգործնախարարի պաշտոնում Գյովին փոխարինեց Նրա կողմից հովանալիրվող, մասնագիտությամբ տնտեսագետ Ալի Բարաջամը: Վերջինս շարունակեց պաշտոնավարեց մինչև 2009 թ. ճայիկ 1-ը: 2009 թ. ապրիլյան ընտրություններն օգտագործելով որպես պատրիկա՝ Թուրքիայի վարչապետը պաշտոնանկ արեց Ա. Բարաջամին և արտգործնախարար նշանակեց Ահմեր Դավիթոսյովին:

Հարկ է նշել, որ 2007 թ. ի վեր, ԱՀԿ-ի և քեմալականների միջև հակասությունները դարձան առավել ակնհայտ, և էրդողանը դանդաղորեն սկսեց իրականացնել մի շարք քայլեր՝ նպատակ ունենալով սահմանափակել զինվորականների և դատական իշխանության ներկայացուցիչների, քեմալական արժեհամակարգի ավանդական մեկնաբարությանը հավատարիմ պահպանողական շրջանակների լիազորությունները և օրենսդրական իրավունքները: Այդ գործնարարության համար պահանջվեց առնվազն 7-8 տարի, և միայն 2010 թ. սեպտեմբերի 12-ին սահմանադրական փոփոխությունների հանրաբեկի արդյունքում հնարավոր եղակ է ականատեսն նվազեցնել նշված դերակատարների կողմից ԱՀԿ-ի հեմ քայլերի ծնննարկման հնարավորությունը: Ինարկե, կար նաև արտաքին ծակների գործուր, ԵՍ-ի առջև ստանձնան պարտավորությունների հարցը և միայն ԱՀԿ-ի գործուրով չէ, որ պայմանավորվեց քեմալականության դիրքերի սասանման գործնարարությունը: Այն սկսվել էր դեռ 1999 թ., երբ Թուրքիային շնորհվեց ԵՍ-ի թեկնածու երկիրի կարգավիճակ: 1999-2002 թթ. Էջնիքի կոստյոնի կառավարությանն արդեն հաջողվել էր մի քանի օրենդրական փոփոխություններ կատարելու, որոնց շնորհիվ սկսվել էր մի գործնարարությունը, որը թերելու էր նաև քառարական դաշտում զինվորականության դերակատարման նվազեցման պահանջը: 2002-2010 թթ. ընթացքում ԱՀԿ-ն տարբեր մարտավարական հնարքներ գործադրելով, կարողացավ իրականացնել է ական քայլեր: Հատկապես կարևոր էին էրգեներին ցանցի հայտնաբերումը և համանուն դատավարական գործնարարությունների

աղմկահարույց բացահայտումների փաստը և այլն: Այս քայլերի արդյունքում քեմալականությունը և դրա ավանդական հարային ընկայման բնույթը չական փոփոխության ենթարկվեց:

Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական միտումները գնահատելիս կարող ենք նշել, որ ոպամակարական ուղղությունը փոփոխություն տեղի չի ունեցել, այլ փոխարենը կատարվել են առանձին երկրների ու տարածաշրջանային գործնարացների վերաբերյալ մարտավարական վերածնակերպումները: 2000-ական թթ. Թուրքիան որոշեց շնանականի հանդիսատեսի դերում և տարածաշրջանում ուժիւրի վերապատճենումներում ունենալ սեփական դերն ու նշանակությունը: Հետևաբար, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը ԱՀԿ-ի կառավարման տարիներին կարելի է դիտարկել որպես առավելաստ նոր մեթոդների կիրառմամբ նախկինում սահմանափակ հաջողություններ արձանագրած տարածաշրջաններում և միջազգային հարաբեկներում Թուրքիայի ազգային և պետական շահերի նորովի դիրքավորման հետևողական քաղաքականությունը:

Ընդունված է կարծել, որ Արդարություն և զարգացում կուսակցության կողմից Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում դրվագ էր միայն «Շազմավարական խորթյան» դոկտրինը, որը ենթադրում էր մասնակցություն տարածաշրջանային հակամարտությունների լուծանմանը և տարածաշրջանում Թուրքիայի վարկի բարձրացում: Անշուշտ այն կարևորագոյն հայեցակարգային և զարաֆարախոսական մշակում էր, սակայն 2000-ական թթ. մասին խոսելիս հարկ է նշել նաև 1997-2002 թթ. Թուրքիայի արտաքին գործերի նախարար Խամայի Ջեմի կողմից իրականացված մի շարք նոր ուղղությունների մասին: Խամայի Ջեմը, ինելով Բյուզենյան էջմիածին Զախ Ժողովրդավարական կուսակցության անդամ, Դավիթոսյովի հետ միասին դիտվում է որպես հավասարաշահ կարևոր հետագիծ ունեցած արտգործնախարարներից ու տեսաբաններից մեջը: Սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության հետևորդ Ջեմը արտաքին քաղաքական նախաձեռնություններում և փորձում էր մեկտեղի հասարակության զարգացման սոցիալ-դեմոկրատական մոդելները և 1990-ականներին բնորոշ միջազգային հարաբերությունների առանձնահատկությունները: Նրա «Թուրքիան նոր դարաշրջանում» գիրը³⁹, որտեղ ամ-

³⁹ I. Çem, Turkey in the New Century, Mersin: Rustem Bookshop, 2001.

փոփված են նրա երկյաները, հարցարդույցները, մեկնաբանությունները և հիշողությունները մեծապես օգնու են հասկանայ նրա պատկերացումները միջազգային հարաբերությունների վերաբերյալ։ Այս գրքում Ձեմն առաջ է բաշխում Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր տեսական՝ միևնույն ժամանակ ընսադատեղով Թուրքիայի նախորդ տասնամյակներում իրականացված դասական արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը։ Նրա կարծիքով Թուրքիայի արտաքին քաղաքականությունը հանրապետության շրջանում արդատվել է ճշգրկության արժանության և պատմական անցյալից։ Այս պետք է փոխարինվի նոր մոտեցմամբ, որի հիմքում պետք է լինի այն գաղափարի գիտակցությունը, որ Թուրքիայի պատրազմի ավարտը, գլորավիճակին պետք է հենվի օսմանյան ժամանակահատվածից ժառանգված հարուստ ինքնության և պատմական ծերքերումների վրա⁴⁰։ Համաձայն Ձեմի՝ Սառը պատերազմի ավարտը, գլորավիճակին նոր երևոյները և տեխնոլոգիաների դարաշրջանը արտաքին քաղաքականության համար նոր հանրավորություններ են բացում։ Ըստ նրա, այդ հանրավորությունն առկա է նաև Թուրքիայի համար, որ պետք է վերջինիս արտաքին քաղաքականությունը լինի առավել ինքնավտահի⁴¹։ Նա ընսադատում է յուրք քաղաքական գործիքներին, արտաքին քաղաքականության պատասխանատուություններին աշխարհը, Թուրքիայի հարևան պետություններին սև ու սպիտակ ակնոցներով նայելու համար։ Ձեմը մերժում է բարեկամ ընդիմեն թշնամու իրարամերդ ընկալումը և առաջարկում ինտիրների լուծման առավել ճնշու բանաձև։ Ըստ նրա, արտաքին քաղաքականությունը «պետության շահերի մաթեմատիկական հավասարումն» է, հետևաբար, պետությունը պետք է ստեղծի հարմար միջավայր ճկուն և ակտիվ արտաքին քաղաքականություն իրականացնելու համար⁴²։ Ձեմի գործ վերաբերյալ գրած գրախոսականում Զան Դունդարն առանձնացնում է նաև Ձեմի առաջ քաշած հետևյալ դրույթը, որ 21-րդ դարում Թուրքիան պետք է անպայման վերածվի «աշխարհի պետության», քանի որ Թուրքիան հյումարական աշխարհում եվրոպական չափանիշներ արձանագրում պետություն է և մեր-

ճավորական երկրներին պետք է ներկայացվի որպես նմուշներ, այն կոչելով «բուրգական նմուշներ»⁴³։

Ձեմի համար Թուրքիան թե՛ Արևնյան, թե՛ Արևմտյան, թե՛ Ասիական, թե՛ Եվրոպական, թե՛ մահմերական, և թե՛ աշխարհիկ պետություն էր, հետևաբար, այդ հանգամանքը կարևի էր խելամտորեն օգտագործել Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ նոր ինքնության ծևավորման ու ազգային շահերի ճիշտ դիրքակրման համար⁴⁴։ Այս ընկալումների մեկտեղմաբ ու արտաքին քաղաքականության մեջ նոր շեշտադրումների ներթերմաբ Ձեմին հաջողվեց էականորեն փոխել Թուրքիայի վերաբերյալ առկա ընկալումը Եվրոպայում և Մերձավոր Արևելյան։ Նրա օրոք Թուրքիայի շնորհվեց ԵՄ-ի անդամության թեկնածու երկրի կարգավիճակ, դրական միտումներ նկատվեցին Հռնաստանի, Կիպրոսի, Գերմանիայի և Թուրքիայի աշխարհագրական մի շարք այլ հարևանների հետ ավանդաբար լարված հարաբերություններում։

Ձեմի կողմից որդեգրած քաղաքական ռեալիզմի մի շարք տարրեր նոր ռովանդակությամբ, նոր քաղաքական իրողությունների ներք շարունակություն գտան նաև նրա պաշտոնավարումից հետո։ Ուշագրավ է, որ նոյն թվականին Սուարույն լրյա տեսավ մեկ այլ աշխատություն, որն առավել տեսական էր, սակայն այն ստացավ առավել մեծ ճանաչում։ Այս գրքի հեղինակը Ամերի Դավիթովովն էր, իսկ գիրքը կըսվում էր «Ռազմավարական խորություն»⁴⁵։ Դժվար է ասել, թե այս երկու աշխատանքների հեղինակները ինչպիսի փոխազդեցուրյուն են ունեցել, կամ ունեցել են արյոց, սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ գրքի հրատարակման ժամանակ Ձեմը գրքող արտգրիննախարար էր, իսկ Դավիթօնյուն՝ համալսարակի պրոֆեսոր, ապա կարող ենք եղանականել, որ 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբներին Թուրքիայում ծևավորվել է ընդհանուր գիտակցությունը, որ Սառը պատերազմի ընթացքում իրականացված արտաքին քաղաքականությունը շի կարող կիրառվել նոր դարաշրջանու։ Ավելին, արտաքին քաղաքական նախաձեռնությունները պետք է ունենան

⁴⁰ C. Dündar, Ben Böyle Veda Etmeliyim, 2008, İstanbul, s. 202-204.

⁴¹ O. Ormeci, Ismail Cem's Foreign Policy, SDU Faculty of Arts and Sciences, Journal of Social Sciences, May 2011, n. 23, p. 245.

⁴² A. Davutoğlu, Stratejik Derinlik: Turkiyen'in Ulusları Konumu, İstanbul, 2001.

⁴³ Նոյն տեղում, էջ 3։

⁴⁴ Նոյն տեղում, էջ 5։

⁴⁵ Նոյն տեղում, էջ 13։

ոչ միայն նոր ծե, այլ նաև նոր ու գրավիչ գաղափարախոսական բովանդակություն։ Հետևաքար, Ձեմի կողմից առաջարկված արտաքին քաղաքական կազմակերպագաղափարախոսական քանաձնելով էական ագրեցույթով են ունեցել Արդարությունը և զարգացու կուսակցության արտաքին քաղաքականության վրա։ Ձեմի առաջարկած որոշ դրույթներ ԱՀԿ-ի օրոք ստացան հետագա զարգացում, որոշները՝ տեսանելի կիրառում, որոշ ուղղություններում եղան իրական ձեռքբերումներ, որոշներում ձեռքբերումները սահմանափակ կամ ժամանակավոր էին։ Ստորև ներկայացվում են ԱՀԿ-ի ժամանակաշրջանում մշակված մի շարք ուղղությունների և պարկուիկ քաղաքական կիրառությունների որոշ առանձնահատկություններ։

Որոշակիորեն վերանայվեց երկար տարիներ շրջանառ վող այն տեսությունը, ըստ որի՝ Թուրքիան կամ կամուրջ էր Արևելքի ու Արևմտարի միջև, կամ ճակատային երկիր՝ «Սարդ պատերազմի» ժամանակ, կամ սովորական մի պետություն իշխանական աշխարհի և Արևմտարի միջև։ Կամուրջ-պետության տեսությունը ենթադրում է կրավորականություն, ոչ թե հնարավորություն է տախի հանդես գալու իր նախածեռնություններով, այլ նախատեսում է անցակետի դեր գաղափարներով, արժեքներով և հաստատություններով մի կողմից մուտք փոխարքությունը։

Դրա փոխարքին հաստատվեց Թուրքիայի՝ որպես կենտրոնական, օպտիմալ կամ առանձնահատուկ պետության տեսությունը։ Մշագգային հարաբերությունների պրոֆեսոր, դեսպան, Թուրքիայի վարչապետի ու արտգործնախարարի ավագ խորհրդական Ա. Շավութօղոյի բնութագրմամբ՝ Թուրքիան հանդիսաւ է զայխ մի քանի տարածաշրջանային ինքնություններով, որոնք հնարավոր չեն ներկայացնել որպես մեկ ինքնություն։ «Իր ագրեցույթան ոլորտներով Թուրքիան միաժամանակ մերձավորաբենայն, քականական, կովկասյան, միջերկածովյան, Պարսիկ ծոցի, կենտրոնախական, կասպյան և սկզբանական երկիր է»⁴⁶, ինչի շնորհիվ Թուրքիան կարողանում է

տարաշարժմներ կատարել միաժամանակ մի քանի տարածաշրջաններում»⁴⁸։ Համաձայն Շավութօղոյի՝ երկիր նոր արտաքին քաղաքականության գաղափարական հենքը պետք է լինեն պատմական և աշխարհագրական խորության թեզերը, որոնցով ապահովվելու է վերոհիշյալ ուզմավարական խորության իրականացումը։ Հմնվելով այդ երկու «խորությունների վրա», Թուրքիան իր անմիջական տարածաշրջանում «ունի պատասխանատվությունը և միաժամանակ որոշ իրավունքներ։ Այս ամենի հետևանքով Թուրքիան միջազգային հարաբերություններում վերածվում է կենտրոնական պետության, քացառված է նրա՝ ծայրամասային պետությունը լինելու հավանականությունը, և արականների, Մերձավոր Արևելքի ու Կովկասի հպիկենություններ։»⁴⁹

ԱՀԿ-ի արտաքին քաղաքականությունը իհմնված է 5 փոխկապակցված սկզբունքների վրա։ Ժողովրդավարացում առանց անվտանգության և կյայոնության խաթարման, յակ հարաբերություններ («զրո խնդիրներ») հարևանների հետ, զերականիվ, քազմակերպ և փոխարացնող քաղաքականություն, նոր դիվանագիտական ոճ (հնքնավստահության), ստատիկ դիվանագիտությունից անցում դինամիկականից⁵⁰։

Վերջին չորս-հինգ տարիների ընթացքում Թուրքիան հեռագնա ու քազմակերպու քաղաքականություն իրականացնելու համար առաջնորդվում է արտաքին քաղաքականության նշանակած սկզբունքներով։ Երկիրն ակտիվիտեն ներգրավված էր մերձավորարևելյան հակամարտությունների լուծման գործում (Խորան-Միրիա, Խորայի-Պաղեստին) շահագրգուված էր ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից մերժված Սուդանի և Համասի մեկուսացումը վերացնելու մեջ՝ փորձելով հարթել ամերիկյան դիվանագիտական անհաջողություններից առաջացած աշխարհաքաղաքական անցութեաու։ Թեև Թուրքիայի մերձավորարևելյան միջնորդական առաքելությունները մինչ այժմ լայն առումով տպակորիշ հաջողություններ չեն ունեցել, սակայն նա կարողացավ ծեղո բերել Սիրիայի վասահությունը ու տայ ամերիկյան պատմամիջոցներից ազատ շնչելու հնարավորություն։

Այդուհանդեռ, Թուրքիայի արտաքին քաղաքական վերնախավը, հատկապես՝ ԱԳՆ ընտրանին, փակ շրջաններում,

⁴⁶ Նոյն տեղում, էջ 78:

⁴⁷ Turkey's International Role (Interview with A. Davutoğlu).

⁴⁸ A. Davutoğlu, Türkiye Merkez Ülkeye olmali, Radikal, 25.02.2004.

Turkey's International Role (Interview with A. Davutoğlu). "Utpost-utrikespolitiska studentforeningens webbtidning" (<http://www.utlinkoping.org/utpost.php?article=38&page=0>).

A. Davutoğlu, Turkey's Foreign Policy Vision: an Assessment of 2007, Insight Turkey, 2008, vol. 10/1, p. 77.

հարցականի տակ էր դուռամ ԱՀԿ-ի հավակնոտ արտաքին քաղաքական ուղեգծը՝ այս համարելով բոլոր ճակատներուա պարզուակ ու անհեռատես: Այս հանգամանքի հաշվառմամբ ԱՀԿ-ի դեկավարությունը ժամանակ առ ժամանակ, տեղի էր տայիս բյուրկրատական ապարատի կողմից հնչող թնադատությաններին և որոշ դեպքերում անզամ սահմանափակուա կամ մեղմացնուա արտաքին քաղաքական որոշ նախաձեռնություններ:

Մինչև 2009 թ. վարչապես Էրդողանի և արտաքին գործերի նախարարներ Գյույի և Բարաջանի արտաքին հարաբերություններով գրավող թիմերը քաղկացաց էին քավական երիտասարդ ու դիմանմիկ մասնակիությամբ փորձագետներից, որոնց գործունեության արդյունավետությունը կուսակցության դեկավարության կողմից բարձր էր գնահատվուա: Դրանց թվուա են Սուար Քընօթըօլուն, Ջոնայր Զափոսուն, Էգեմեն Բաղըջը, Օմեր Չեիքը, Շարան Դաշը, Ուհեա Դոնեմեջը, Իրուահիմ Քալընը, Մելիքոր Զափիչօղոյն, որոնք հիմնականուա 38-50 տարեկան էին և համարվուա են Էրդողանի վաստակելի թիմակիցներ⁵¹: Դավութօղոյն ուներ առանձին կարևորություն արտաքին քաղաքական գաղափարախոսական կողմնորոշչների մշակման և նախարարին կամ վարչապետին ներկայացման հարցերուա: Ուշագրավ է նաև այս հանգամանքը, որ վերոհիշյալ խորհրդականների մեծ մասն ստացակ առաջխաղացուա և բարձր պաշտոններ են գրահեցնուա օրենսդիր և գործադիր մարմիններուա:⁵²

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը ուսամնափու թողները պնդուա են, որ նրանք, ովքեր ցանկանուա են հարկանալ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, առաջին հերթին պետք է գործ ունենան Դավութօղոյի հետ: Թե՛ Էրդողանը, թե՛ Գյույի Դավութօղոյին անվանուա են «հոջա», իսկ Թուրքիայու ԱՄՆ-ի նախկին դեսպան Մարկ Հարիսը նրան մի առիթով անվանել էր «Թուրքիայի Թիսինչեր»: Խորհրդականներին Թուրքիայու երկար տարիներ նման ուշադրություն չեր դարձվել, և այս հանգամանքը թուրքական քաղաքա-

⁵¹ Başbakan'ın adamları..., (<http://milliyet.com.tr/2007/08/02/son/sonsiy13.asp>)

⁵² ԱՀԿ-ի կառավարման առաջին շրջամի արտաքին քաղաքականության մասին առավել մակաման տես Վահրամ Տեր-Մարտիսյան, Թուրքիան Հայաստակ ազգային անվտանգության ուսամմապարության իրականացման համատեքստում, Շազմավարական անվտանգային հետազոտություններ, 2014, Երևան, հասոր 1, էջ 592-621:

կառուցան մշակման մեթոդաբանության վերանայման վկայությունն է: Դավութօղոյի քաղաքագիտական, տեսական և փորձագիտական ուսուրացի գումարվուա է արտաքին քաղաքական որդուում Էրդողանի, Գյուի, Բարաջանի երկարամյա գործության հաջողված փորձը: Հարկ է ավելացնել նաև նախագահ Գյուին, որին փորձառության և տպավորիչ դիվանագիտական կարողությունների համար արտեկրուա անվանուա նաև «Թուրքիայի արտաքին քաղաքականության նախագահ»:

Այս տեսանկյունից 2008 թ. «Կովկասյան պլատֆորմի» նախաձեռնությունը նախարարամար էր դիմել որպես Դավութօղոյի դղյուրինի քաղադրիչ, որի հիմքում անկայուն տարածաշրջանային գոտիներուու ներկայացված յիներու և որա շնորհիվ սեփական շահերը հետապնդելու նրա ծրագիրն էր: Վրաստանուա տեղի ունեցած օգոստոսյան դեպքերից հետո Թուրքիայի համար պատեհ առիթ էր ի հիշեցնելու իր «ուազմավարական խորհրդան» կենտրոնական պետությունը յիներու մասին: Օգոստոսյան պատերազմի առնչությամբ սուս խաղաղության և զինադադարի հաստատման փորձով հանդիս գալու տարբերակը համարելով նվազ ազդեցիկ Թուրքիան որոշեց գործականութեն ապահովել իր շահերը ներկարությունը արագործն փոփոխվելու տարածաշրջանու: Ընդունված է համարել, որ Էրդողանը «պլատֆորմի» մասին առաջին հայտարարությունն արել է 2008 թ. օգոստոսի 13-ին Մոսկվայու, սակայն իրականուա օգոստոսի 10-ին «Մարահ» օրաթերթում տպագրվել է մի վելրիծական հոլոված, որը Թուրքիայի ներքին արագանքը ճշտելու փորձական քայլ էր: Օգոստոսի 11-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նա կրկին խոսել էր «Կովկասյան դաշինքի» ստեղծման նախաձեռնության մասին: Հարկ է նշել, որ օգոստոսի 6-ից Թուրքիայի վարչապետը հանդիպումներ էր ունենուա նորանշանակ ու պաշտոնաթող զինվրականների հետ, և հավանական է, որ կովկասյան միջնորդական նախաձեռնության դրույթներն ընդհանուր առմամբ համաձայնեցված էին ՇՈՒ-ի հետ: Այդ կովկասյան նախաձեռնությունը, մինչև պլատֆորմ կոչվելը, անվանվուա էր դաշինք, միություն, պայմանագիր, համաձայնություն, պակտ, հոգակագիր, և միայն Թուրքիայի ծեփավարների ու նրանց բանացների կովկասյան այցելություններից հետո առավել ընդունելի դարձավ ներկայում շղանառվող տարբերակը: Այսինքն՝

անդրությունը սկիզբ էր առնում անվանումից և ավարտվում բրկանդակություն չունենալու մասին խոսակցություններով:

Չայած ԿՎՀՊԴ-ին տրվող հոռեստասական գնահատականներին թուրքական կողմը հետևողական կերպով առաջ էր տանում այդ գաղափարը: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ տվյալ նախաձեռնությունը ոչ թե շուտափոյց արձագանքան քայլ էր, այլ տեղափորկամ է Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր որվագօնքերի մեջ, ապա դա Կովկասին ներկայացվածություն ապահովելու հնարավոր փորձ էր՝ միտված Կովկասից դուս չմնալուն, քանի որ դա կիրավիր որպես ԱՀԿ-ի արտաքին քաղաքականության աշխարհաքաղաքական և հայեցակարգային բացքորոշ: Ուստի հավանական է, որ մոտ ապագայում Թուրքիան ավելի մեծ ջանքեր կգործադրի այդ նախագծի հետաքան հաջողորդյան համար: Դա ավելի հավանական է թվում նաև մերձավորակեցված քաղաքականության ասպարեզում էրդողանի կառավարության ոչ այնքան տպագրիչ ծեղքերումների համապատկերում: Տվյալ փուլում հակասություններ են նկատվում Թուրքիայի արտաքին քաղաքականության ոլորտում որոշում կայացնողների ավանդական և ԱՀԿ-ի թեսերի միջև: Եթե նախկինում հակասություններն արտահայտվում էին գերազանցապես Համասի առաջնորդի և Սուլումնի առաջնորդի Թուրքիա կատարած այցերի ընտառականությամբ, ԵՄ-ից հետզինեւ հեռացման անընդունելի քաղաքականությամբ, Խորայիշի նկատմամբ էրդողանի կառավարության անընդունելի դիրքորոշումներով, ապա վերջին շրջանում ավանդական կողմորոշում ունեցող դիվանագետները նշում են, որ ԱՀԿ-ի բազմավեկորո ու նախաձեռնության արտաքին քաղաքականությունն արկածախնդրություն էր, անիրական ու պարզունակ և կարող էր վնասել Թուրքիայի արտաքին շահերին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայի արտաքին քաղաքականության ձևավորման, իրականացման և վերագնահատման գործընթացները կրում են մի շարք անհատների կառուցների, կազմակերպությունների ու գործուների ազդեցությունը: Դրանցից որոշները հեշտությամբ տեսանելի են և ակնհայտորեն համագործակցում են ԱԳՆ-ի հետ, կամ ուղղորդվում վերջինս կողմից: Մյուսների կամքը արտաքին քաղաքականության հետ առաջին հայացքից կարող է տարբերակելը, սակայն դրանց ազդեցությունը Թուր-

քիայի արտաքին քաղաքականության վրա տեսանելի են դարձել որոշ ժամանակ անց: Արտաքին քաղաքականության ձևավորման վրա զգայի ազդեցություն են ունեցել նաև անհատները, որոնք նշանակած կերպով ներազդել են արտաքին քաղաքականության ամենավոր որոշումների կայացմանը՝ հաճախ շրջանցելով օրենքով սահմանված դրույթները: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը վերջին տարիներին ենթարկվել է զգայի փոփոխությունների: ԱՀԿ-ի կառավարման տարիներին արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում ներգրավվել են նոր դերակատարներ, որոնք նոր բովանդակություն են հաղորդել Թուրքիայի արտաքին քաղաքականությանը:

ԱՆՈՒԾ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԴՔԵԶԱՆԻ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՇՆՈՒԹՅԱՆ» ՁԱԽՈՂՄԱՆ ՀԱՄԱՏԵՐՍՈՒՄ (2008-2010թ.)

Ուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը ուսա-թուրքական մերձեցնայից հետո 2016 թ. հոկտեմբերի 14-ին հայտարկել էր, որ Թուրքիան կարող է դրական դեր խաղալ դարարարայան հակամարտության ապարագելափակման հարցում: «Կարևոր գործն է այն, որ Թուրքիան կարող է դրական դեր խաղալ Լեռնային Ղարաբաղի ապարագելափակման հարցում նորմայ տնտեսական փոխգործակցություն ապահովելով տարածաշրջանում», - ասել էր նա լրագրողներին¹: Նա նաև նշել էր, որ եթե Հայաստանն ու Թուրքիան վերադառնան իրենց պայմանագրավճարվողների կատարմանը, ապա իրենց միայն ուրախ կինըն: «Մեր կարծիքով՝ ղարաբաղյան հակամարտության հարցում կինի հայ-թուրքական հարցությունը կարող է առաջնայացն առանցքային կինի հայ-թուրքական հարցերությունների կարգավորման համար: Դա լյանք է: Տեսնենք՝ ինչ կատացվի», - ավելացրել էր Լավրովը: Նրա խոսքով՝ Թուրքիան կարող է դրական դեր խաղալ «ողջ տարածաշրջանում նորմայ տնտեսական փոխագեցություն ապահովելով՝ լոփսիկ, տրանսպորտային, ենթակառուցվածքային հարցերում»²: Դրանից հետո Եվրամիությանը՝ Թուրքիայի անդամակցության պատրաստվածության վերաբերյալ Եվրահանձնաժողովի հրապարակած տարեկան զեկուցում, որում ընդհանուր առմամբ գնահատական էր տրված Թուրքիայի վարած տնտեսական և քաղաքական քարտիֆումներին, նշվում էր, որ Եվրամիությանն անդամակցել ցանկացող դին:

¹ В МИД России считают, что Турция может содействовать разблокированию нагорно-карабахского урегулирования, <http://ru.armeniasputnik.am/karabah/20161014/5168519/Karabah-konflikt-Turciya-posrednik.html>

² Ուսաստանի արտգործնախարարության հայտում է, որ Թուրքիան կարող է նպաստել ղարաբաղյան հակամարտության ապարագելափակմանը, <http://armeniasputnik.am/karabah/20161014/5170326/ankara-xarabax.html>

Թուրքիայում հետընթաց է արձանագրվել մի շարք ոլորտներում: Մասնավորապես, զեկույցի Հարավային Կովկասին և Կենտրոնական Ասիային Նվիրված հատվածում նշվում էր, որ պաշտոնական Անկարան բացահայտ աջակցություն էր հայտնել Աղրբեջանին 2016 թվականի ապրիլին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած բախումների ընթացքում³: Սա հստակ ազդակ էր Լավրովին, որ Թուրքիան չի կարող հակամարտության մեջ անաշար միջնորդ լինել: Խակ նոյեմբերի 17-ին հայ-թուրքական սահմանի բացման մասին խոսել էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը «Տրունի Արմենիային» տված բացահայտկան հարցադրույցում⁴: Անդրադառնապուտ հայ-թուրքական կարգավորման ձախողման պատճառներին Ս. Սարգսյանն ասել էր, «որոշ ժամանակ անց պարզ դառձավ, որ Թուրքիայի պատրաստ չեն վավերացնել արձանագրությունները և փաստացի պատրաստ չեն հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ առանց նախապայմանների»⁵:

Այս համատեքստում տեղին է կրկին անդրադառնայի Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման տապալման պատճառներին, դիտարկելով նաև արտաքին գործոնների, մասնագրապես Աղրբեջանի ազդեցությունն այդ գործներացում:

Թուրքիայի՝ 2008-2010 թթ. Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման փորձը որոշ թուրք վերորոշաբանների կողմից գնահատվում է որպես ԱՀԿ-ի համար պատմական նշանակության նախագիծ⁶:

Շուրջ երկու տարի այդ գործներացն առաջնային էր տարածաշրջանային առաջատարի հավակնություններ ունեցող

³ Հ. Մոսայեյյան, Բյոյութը մեղադրում է Անկարային՝ ապրիլյան քաորդյան պատերազմում Աղրբեջանին աջակցելու մեջ, <http://www.azatutyun.am/a/28117585.html>

⁴ Արգայան, Յանկացած հարսանիք պահանջում է Երկուի համաձայնությունը. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը «Տրունի Արմենիային» տված բացահայտկան հարցում է հայ-թուրքական սահմանի բացման մասին <http://armeniasputnik.am/politics/20161117/5509134/hayastan-turciya-sahman.html>

⁵ Նոյն տեղում:

⁶ А. Гюргюлү, Турция и Южный Кавказ в 2010 г., Кавказ-2010. Ежегодник Института Кавказа, Ереван: 2012, с. 140.

Թուրքիայի հարավկողկայան քաղաքականության համայիրում՝ ԱՀԿ+ի «հայկական նախաձեռնությունը» նաև Թուրքիայի նախկին արտգործնախարար, հետագայում՝ վարչապետ Ա. Դավիթօնլիդի հոչակած «զոր խնդիր հարևանների հետ» նոր արտաքին քաղաքականության սկզբունքի յուրատեսակ «փորձաքար» հանդիսացավ:

Հյայստան-Թուրքիա երկխոսության տարրեր փուլերով ի հայտ եկան «կողմնակի» կամ «ածանցյալ» գործնթացներ և գործոններ, որոնք որոշակի ազդեցություն ունեցան կողմերի դիրքորոշումների և բանակցությունների արդյունքների վրա: Դրանց թվում կարևորագույններից մեկը Ալբրեժանի գործնները է: Հարկ է նշել, որ ալբրեժանական գործննը թուրքական հասարակական կարծիքի վրա և հաստակացն թուրքական վերնախավերի հայացքների ու տեսակետների ձևափորման գործում շատ մեծ է եղել: Դա պայմանավորված է ոչ միայն Թուրքիայի՝ էներգավիճակի հարցում Ալբրեժանից կախվածության հանգամանքով կամ Ալբրեժանի՝ Թուրքիայի տնտեսության մեջ աճող ներդրումների պատճենով, ինչպես նաև երկու երկրների բիզնես-էկտաների ստվերային կոռուպցիոն շահերի միահյուսվածությամբ: Խնդիրը նրանում է, որ Ալբրեժանի անկախացումից հետո նրա և Թուրքիայի Հանրապետության քազմաքննությա և քազմաշերտա հարաբերությունները նպաստեցին նրան, որ ահեղի թվով Ալբրեժանի քաղաքացիներ տեղափոխվեցին ժամանակավոր, իսկ ավելի ուշ նաև մշտական բնակության Թուրքիա: Այս մարդիկ, կապ ապահովնելով Ալբրեժանի իրենց հարազատների ու բարեկանների հետ, սկսեցին միահյուսվել թուրքական հասարակությանը՝ աստճանաբար դառնալով նրա մի մասը: Նրանք հանդիսացել են հանդիսանուուն կարևոր գործոն Թուրքիայում ալբրեժանական իշխանությունների կողմից հակահայկական տրամադրությունների բորբոքման համար: Նրանց գործնական ազդեցությունը թուրքական հասարակական կարծիքի վրա անընդհատ մեծացել է և հիմք է դարձել, որպեսզի թուրքական քաղաքական վերնախավը հաշվի առնել թե՛ սեփական քաղաքացիների, թե՛ մշտական բնակություն հաստատած ալբրեժանցիների տրամադրությունները:

Փարիզի Քաղաքական գիտությունների համալսարանի Միջազգային հետազոտությունների կենտրոնի (CRI) գիտաշխատող Բայրամ Բաջջն վերլուծելով Թուրքիայի ու Ալբրե-

թյանի միջև առկա հատուկ հարաբերությունները, որոնք ունեն պատմական, բայց նաև տնտեսական, մշակութային, աշխարհագրական և քաղաքական հիմքեր, գրում է: «Թուրքիայի համար Ալբրեժանը տվյալական երկիր է, կարծիք չէ այս համեմատել մյուս հարևանների հետ: Դա գալիք է նրանց ինքնուրությունների մոտիկությունից, քանի որ երկու երկներն են պատկանում են նոյն թյուրքականությանը, կամ զոնե նոյն ընդհանուր տեսլականն ունեն թյուրքականության վերաբերյալ, ինչը այնքան էլ նախկին ԽՍՀՄ մյուս թյուրքական երկների պարագան չէ: Թեև տարրերություններ կան Անատոլիայի թուրքական ինքնության ու Ալբրեժանի թյուրքական ինքնության միջև, բայց այդ մոտիկությունն ընդունում ու ստանձնում են երկուստեղ: Միևնույն ժամանակ մոտ բառն տարի է Թուրքիան ծևակորում և ազգային և թյուրքաստական (և նոյնիսկ պանթուրքական) դիվակոս, որտեղ իրեն շատ լավ է գգում Ալբրեժանը: Բացի այդ, երկու ժողովորդները աշխարհագործեն մոտ են, և ընդհանրապես՝ Թուրքիայի և Ալբրեժանի միջև հարաբերություններն ավելի լավ պատկերացներ համար պետք է նշել, որ թեմայական հանրապետության ստեղծման օրից բազմաթիվ ալբրեժանից մտավորականներ, որոնք մաս էին կազմել ոռական կայսրության մասմեդական բարենորդական շարժման, Թուրքիա գնացին մասնակցելու Թուրքիայի Հանրապետության հիմնադրմանը: Դա նպաստեց երկու երկրների միջև հասուն կապերի ստեղծմանը: Ի վերջ անկախության հոչակումներից ի վերջ այն հանգամանքը, որ երկու երկրները ունեն նոյն «թշնամին», նոյն հակառակորդը՝ Հայաստանը, մերձեցման այս երևույթը և ստեղծել: Երկու երկրների մերձավորությունից երբեմն կարող է փոխկախվածություն առաջանալ: Կողմերից ոչ մենք չի կարող հենց այդպես իր ուզանքները անել, նա պետք է հաշվի առնի իր գործընկերոց դիրքը: Նրանք պարտավոր են միմյանց ցոյց տալ անխախտ հավասարմություն: Մի քանի տարի առաջ մենք այդ բանը տեսանք հայ-թուրքական մերձեցմամբ, որը քիչ էր մնում իրականություն դառնար հայ-թուրքական սահմանի բացմաբ... Այնտեղ մենք տեսանք, որ Թուրքիան իր ալբրեժանից գործընկերոց պատճենով չէր կարող հենց իր ուզանքն անել: Ալբրեժանը, իհարկե, Թուրքիայից շատ ավելի փոքր և նվազ ազդեցիկ երկիր է, բայց նա որոշ հարցերով Թուրքիային «պատանի է վերցրել»: Խսկ Թուրքիան չի կարող անտեսել իր

հարևանի խոսքը, քանի որ թուրքական հասարակությունը Ադրբեյջանի հանդեպ շատ քական վերաբերմունք ունի⁷:

Բայց այս հարևանի կարևորությունը է Թուրքիայի և Ադրբեյջանի միջև ալիք տնտեսական կապերը: Մասնավորապես, SOCAR-ը (State Oil Company of Azerbaijan Republic, Ադրբեյջանի Հանրապետության պետական նավթային ընկերություն) շատ խոշոր ընկերություն է և Թուրքիայում ներդրումային շատ մեծ կարողություններ ունի: Հայտնի է նաև, որ նա ներդրումներ է կատարում նավթարդյունաբերությունից բացի այլ ոլորտներում՝ մասնավորապես թուրքական բանկային համակարգում: Իսկ հակառակ ուղղությամբ՝ Ադրբեյջանում գործում են հայուրավոր թուրքական ընկերություններ, ինչ մննի սպասարկան ոլորտում, թե փոր բիզնեսում կամ շինարարությունում: Սակայն երկու երկրների միջև տնտեսության զիսավոր սեկտորը և հարաբերությունների հիմնական առանձը իդուն մնում է էներգետիկան: Ինչ էլ ինի ոճմիմ բնույթը Անկարայում կամ Բաքվում, ներդրումների նման մակարդակը կանվածություն է առաջացնում: Անկարան, օրինակ, իր որոշումներում չի կարող լինին անկախ լինել, քանի որ Զեյհանը (կարևոր նավահանգիստ)՝ Միջերկրական ծովի ափին, վերջին կետուն է Բարու-Թրիփիս-Զեյհան խողովակաշարի, որը Կասպից ծովից Ազերի-Շիրակ-Գյուղեցիլ հանքավայրերի նավթն է հասցնում – ԱՀ՝) մեծ գումարներ է թրում դեպի Թուրքիա: Էներգետիկայի այսպիսի կարևոր սեկտորի վրա հիմնված այս տեսակի հարաբերությունների խնդիրն է սա, եթե, նոյնինչ, եթե քաղաքական կամ գաղափարական տարածայնություններ ունեն՝ ստիպված են ծեր հարաբերություններում տարբերակում դնել, նշում է թուրք փորձագետը⁸:

ԱՀԿ-ի իշխանության գալուց հետո, մինչև 2008 թ. Թուրքիայի բոլոր համապատասխան ծրագրերի կենտրոնում թուրքադրբեյջանական կապերն էին, և այդ առողմով Թուրքիայի քաղաքանությունը Ադրբեյջանի նկատմամբ առանձնահատուկ փոփոխություն չկրեց⁹: Դեռևս 2003 թ. հունիսին Մադրիդու

⁷ Բայրամ Բայջը, Թուրքիա-Ադրբեյջան՝ Մեկ ազգ, երկու պետություն <http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-turkey-ar/turkey-azerbaijan-one-nation-two-states-armenian>

⁸ Նոյն տեղում:

⁹ Թուրքիայի՝ Ադրբեյջանի նկատմամբ քաղաքականության վերաբերյալ տե՛ս Գ. Արշակյան, Ա. Եղիազարյան, Թուրքիայի քաղաքականության առաջ-

ԱՍՕ-ի Համագործակցության խորհրդի նախարարական նիստից հետո Թուրքիայի այն ժամանակվա ԱԳ նախարար Արդյունակ Գյուղ սեփական նախաձեռնությամբ հանդիպեց ՀՀ պաշտոնակից Վարդան Օսկանյանին: Իր հուշերում այդ հանդիպման մասին Վարդան Օսկանյանը գրում է. «2003 թ. հունիսի 3-ին Մադրիդում հանդիպեցի Արդյունակ Գյուղի հետ: Մա մեր առաջին հանդիպումն էր: Այդ օրը Գյուղ իրոք թելադրեց հանդիպման օրակարգը՝ նշեցի, որ Թուրքիան ցանկանում է բնականոն հարաբերություններ հաստատել բոլոր հարևանների հետ»:

Հաջորդ անգամ Գյուղի հետ հանդիպեցի նոյն տարվա սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ում, Գյուսավոր ասամբլեայի նիստի ընթացքում: Այս հանդիպումը, սակայն, մի քայլ հետ էր նախրդից: Գյուղ նշեց, որ Ղարաբաղի հարցին ընդհանրապես չափրադառնալ չենք կարող, այն անպայման պետք է լինի օրակարգում: Ես պատասխանեցի, որ խնդիր չեմ տեսնում այնքան ժամանակ, քանի որ հայ-թուրքական հարաբերությունները չեն կապվու Ղարաբաղի կազմակերպության հարցին:

Մեր երրորդ հանդիպումը տեղի ունեցավ 2003 թ. դեկտեմբերի 5-ին Բյուտայում, ՆԱՏՕ-ի Համագործակցության խորհրդի նախարարական նիստի ընթացքում: «Պայմանագրության համաձայն՝ հանդիպմանը ես ներկայացել եմ իմ ցուցակով, մինչդեռ Գյուղի ծերեցին ոչինչ չկար: Այդուհանդեմ, մենք կետ առ կետ անցանք իմ ներկայացուած ցուցակի վրայով, և Գյուղն ասաց, որ առնվազն առաջին մի քանի կետերի իրականացման հարցում նա որևէ խնդիր չի տեսնում... Մինչև մեր հաջորդ հանդիպումը, Ադրբեյջանի նախագահ կիամ Այխար 2004 թ. ապրիլին պաշտոնական այց կատարեց Թուրքիա: Այցի ընթացքում Գյուղը հայտարարեց, որ ներկայում թուրք-հայկական սահմանի վերաբացումը բացակայում է: Դա ինձ համար բացահայտ նշան էր, որ մենք վերադառնում ենք գրոյական կետի»¹⁰:

Վարդան Օսկանյանի դիտարկմամբ, թեև Թուրքիայի նոր իշխանությունները գիտակցել էին, որ իրենց երկիրն առանձնապես չի շահել Հայաստան-Թուրքիա հարաբերությունները

¹⁰ Նահերթափոխման Անդրկովկասում 2008-2011 թթ. և Թուրք-Ադրբեյջանական հարաբերությունները, «21-րդ ԴԱՄ», թիվ 1(47), 2013, էջ 57-77:

¹¹ Վ. Օսկանյան, Անտեսված դասեր, <http://www.mediamax.am /am/column/12231/>

հայ-ադրբեջանական հակամարտության լուծման հետ կապելու քաղաքականությունից, այնուամենանիվ թերագնահատել էին Ադրբեջանի գործոնը ու լճակները թուրքիայի վրա¹¹:

Հետագա տարիներին, հասկապես 2007 թ. ողջ ընթացքում թուրքիան փորձեց իրագործել Հարավային Կովկասը պատկտելու քաղաքականությունը: Դրա նպատակը մի դաշինքի ստեղծում էր, որը սկզբում կիներ տնտեսական, հետագայում փորձերով այն վերածել ռազմաքաղաքականի: Ծրագրը պետք է ներառեր Վրաստանը և Ադրբեջանը, որոնք պետք է լինեն թուրքիայի կրտսեր դաշնակիցները և քաջառում էր Հայաստանի մասնակցությունը: Խնչան նկատում է Ռ. Սաֆրասյանը, դա աննախադեպ երևուց էր Հարավային Կովկասում և, ըստ Էրյանի, այն ժամանակվա վարչապետի խորհրդական, պրոֆ. Ահմեր Դավթովոյի՝ թուրքիային անմիջականորեն հարող տարածաշրջաններում, առաջին հերթին, իհարկե, Հարավային Կովկասում «ռազմաքաղաքան խորք» ստեղծելու հայցակարգի հրականացումն էր¹²:

Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններու կյանքի կոչեցին ռազմավարական նշանակության նախագծեր (Քարութիվիստ-Ջեյհան նավթասարություն, Բարութիվիստ-Էրզրում գազամուր, 2007 թ. սկսված Բարութիվիստ-Ախարզապար Երկարգծի)

¹¹ Vartan Oskanian, "Turkey's Missed Opportunity", <http://www.project-syn-dicate.org/commentary/turkey-s-missed-opportunity#Yc62o>
HDE16LYA5Mr.99

¹² Ռ. Սաֆրասյան, Թուրքիայի և հայ-թուրքական հարաբերությունների շուրջ, http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=507 Ա. Դավթովոյի աշխարհաքաղաքական տեսաբյունը շարադրված է նրա՝ Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, Kürk Yayınlari, 2003թ. գրքում: Կովկասի մասին իր գրքում նա գրում է. «Տարածաշրջանային առումով՝ առավել լայնածավալ արտաքին քաղաքականության հորիզոններ գնալու նպատակով պետք է մոտակա ցամաքային ավազանի հետ սահմանային հարեւանների հետ կապելու ամսավորող հարաբերությունները կազմակերպ... Սահմաններից այն կողմէ կերպած դաշինքներն արժեքալոր են... պետք է քայլեր անել փոխկախվածության մակարդակը քարձարացնելու ուղղությամբ... Տեղուած դնելու հասարակությունների միջև տնտեսական ու մշակութային տարրի ուժեղացման վրա», տես՝ Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, Kürk Yayınlari, 2003, s. 117-118.

շնարարություն), որոնց նշանակությունը դրսևորվեց 2008-2010 թթ. Երկրորդ հարաբերությունների ճգնաժամի ընթացքում:

Հայ-թուրքական բանակցային գործընթացի արագացման իրական խթան հանդիսացավ 2008 թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմը¹³:

Հարևան Վրաստանում պատերազմը և դրա հեռանկարները Հարավային Կովկասում թուրքական, ռուսական և արևմտյան շահերի վրա հանգեցրին Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման կարևորույթան և անհրաժեշտության հասունացմանը: Մեկ ամիս անց թուրքիայի այն ժամանակվա արտգրծնախարար Այխ Բարաջանը կասի, որ Վրաստանում պատերազմը «ցոյց տվեց», որ մենք պետք է նոր մոտեցում ցուցաբերենք Կովկասում հակամարտությունների կարգավորմանը», ներայալ Հայաստանի պարագայում¹⁴:

Խնչան նշում են վերը արաներու համար կամ Վրաստանում Ռուսաստանի միջամտությունը հանկարծ մատնանշեց Թուրքիայի տարածաշրջանային քաղաքական և տնտեսական շահերի խոցելիությունը: Պատերազմը Թուրքիայի տարածաշրջանային շահերին առնչվող մի շարք հնդիդիներ հասկեցրեց՝ Ռուսաստանի ի վիճակի է ուժ գործադրել Կովկասում: Վրաստանը, հատկապես Սաակաշվիլիի բախտավորությունը հաշվի առնելով, ենթակա էր ապակայունացման և ոռական ներխուժման՝ ամենայն հավանականությամբ կամածի տակ դնելով ներկայի և ապագա խողովակաշարերի պաշտպանության իր ուսակությունը: Մեկնարանները նշում էին, որ ներդրողներն սկսել են անհանգստություն արտահայտել Նարուկյի և Մրանս-կասպիական հողովակաշարերի ծովագրերի վերաբերյալ, քանզի Վրաստանի դեմքերը մեծացրեցին նաև կայսին և գազային ճանապարհների խոցելիության ըմբռնումը¹⁵:

¹³ "Caucasus Conflict Gave Rise to Turk-Armenian Rapprochement", Turkish Daily News, September 5, 2008; Mitat Çelikpala, "The new battle zone for global hegemony: the Caucasus", Turkish Daily News, October 22, 2008. Պատերազմի ըլլացքի մասին տես՝ С. Минасян, Пятидневная война августа 2008 г.: Военно-политический анализ, Кавказ-2008, Ереван, 2010, с. 106-153.

¹⁴ "Turkey ready to discuss diplomatic ties with Armenia", Hurriyet Daily News, 6 September 2008.

¹⁵ И. В. Охрименко, Турция и кризис на Кавказе. Некоторые полити-

Անմիջապես պատերազմական գործողություններին հետևած 2008 թ. օգոստոսի 12-ին Մոսկվա կատարած այցի ընթացքում Թուրքիայի վարչապետ Էրդողանը առաջարկեց Կովկասյան միություն՝ Կովկասյան կայունության և համագործակցության պատճորմ ստեղծել, որը «կուժեղացներ տարածաշրջանի երկների միջև տնտեսական կապերը և կնպաստեր խնդիրների խաղաղ կարգավիրում»¹⁶:

Հարկ է ուշաբրուժով հրավիրել այն հանգամանքին, որ Կովկասը միավորելու գաղափարը նոր չեր թուրքական դիվանագիտության համար: Դեռևս 2000 թ. հովանարին Վրաստան կատարած այցի ընթացքում Թուրքիայի խայազան Սովորյան Դեմիրեր հանդես եկավ «Հարավային Կովկասի կայունության պատճոր ստեղծման առաջարկով» որը, սակայն հետագա ընթացք չունեցավ¹⁷: Այս անգամ իրադրությունն այլ էր. Թուրքիան ստացել էր դրական արձագանք պլատֆորմի բոլոր հավանական մասնակիցներից (Ադրբեյջան, Հայաստան, Վրաստան + Ռուսաստան ու Թուրքիա), բայց Վրաստանից: Վերջինս հրաժարվել էր մասնակցել Ռուսաստանի հետ համատեղ որևէից նախաձեռնության, քանի որն իր տարածքում գտնվում էին ռուսական զորքեր: Ուշագրավ էր այն հանգամանքը, որ Ադրբեյջանը Հայաստանի մասնակցության վերաբերյալ նմանատիպ առարկություններով պաշտոնապես հանդես չեկավ, ինչը հավանաբար, Թուրքիայի ուժեւ ճնշման արդյունք էր¹⁸: Սակայն ակնհայտ էր, որ «Պլատֆորմի» պոտենցիալ անդամերկրների միջև առկա հակամարտությունները (Հայաստան-Ադրբեյջան, Վրաստան-Ռուսաստան), ինչպես նաև խոչը դրակառադրներ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Իրանի չընդգրկման փաստը գրկում էին այդ նախաձեռնությունը կենսունակությունից: Զնայած պաշտոնական Մոսկվայի առերևոյց դրական արձա-

ческие и экономические аспекты, <http://www.iimes.ru/rus/stat/2008/19-10-08a.htm>

¹⁶ Deniz Devrim and Evelina Schulz, "The Caucasus: Which Role for Turkey in the European Neighborhood", *Insight Turkey*, Vol. 11, No. 3, 2009, p. 181. Թուրքիայի այդ նախաձեռնության մասին տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Հարավային Կովկասում Թուրքիայի նոր նախաձեռնության մասին, http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=739

¹⁷ "Demirel suggests Caucasus Stability Pact", *Hürriyet Daily News*, 16 January 2000.

¹⁸ "Kavkasya İşbirliğine Aliyev Desteği", *Radikal*, 20.08.2008.

գանքների, այնուամենայնիվ հստակ չէր, թե Ռուսաստանը, որ ուս-վրացական պատերազմի հետևանքով մեծացրել էր իր ազդեցությունը տարածաշրջանում, կցանկանա այն կիսել թուրքիայի հետ: Թուրքիան, իր հերթին, այդ ձևաչափում հնարավիրություն կատարա ակտիվ դերակատարում ունենալ Կովկասում, Մոսկվայի հետ մշտական շիման մեջ գտնվելով թույլ չտայ, որ Ռուսաստանը միակողմանի որոշումներ ընդունի այդ տարածաշրջանում¹⁹:

Այսինու կարելի է նշել, որ նախաձեռներով «Կովկասյան կայունության և անվտանգության պլատֆորմ», Թուրքիան նպատակ էր հետապնդում մեծացնել սեփական ազդեցությունը տարածաշրջանում: Անկարայի այդ փորձի մեջ Ռուսաստանի դերի գիտակցումը և տարածաշրջանում ազդեցությունը նրա հետ «կիսելու» առաջարկը նորոյց էր ԱՀԿ-ի քաղաքականության մեջ: Այդ նախաձեռնության մեջ կարևոր մաս էր կազմում նաև Հայաստանի հետ հարաբերությունների կարգավիրումը, առանց որի «Պլատֆորմի» իրականացումն անհնար կիխներ:

2008 թ. սեպտեմբերի 26-ին Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեյջանի արտգործնախարարները եռակողմ հանդիպում անցկացրին Նյու Յորքում: Մինչև հանդիպումը Հայաստանի և Ադրբեյջանի դիվանագետները համախմբին Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը քննարկելու համար: Ըստ հաղորդագրությունների, թուրք և ադրբեյջանի պաշտոնյաները «լրջորեն ըննարկեցին» Նարուկը ծրագրում Հայաստանի մասնակցության հարցը որպես «Ղարաբաղյան խաղաղության համապարփակ պակտի մաս»: Թեև հանդիպման ընթացքում ադրբեյջանական կողմը հայտարարեց, որ չի «համագործակցի Հայաստանի հետ նախքան Հայաստանի կողմից գրավյալ տարածքների վերադարձը, Ադրբեյջանի ինքնիշխան իրավունքների վերականգնումը այդ տարածքների նկատմամբ և Հարավային Կովկասում խաղաղության հաստատությունը»²⁰:

¹⁹ Ա. Հովհաննիսյան, Թուրքիա. ազնիվ միջնորդություն թե՞ քաղաքական սակարկություն, Թյուրքափոստկան և օսմանագիտական հետազոտություններ, հ. VI, Երևան, 2009, էջ 35:

ները անպայման կնպաստեն նաև Ղարաբաղյան հարցի շուտափուր լուծմանը»²⁰:

Թուրք Վերլուծարան Միթաք Չեյխբալյան նշում է, որ ինքը՝ Գյուլը, կարծես համոզված էր դրանում: Սեպտեմբերի 10-ին Բաքու կատարած այցի ընթացքում այդ առիթով նա ասել էր, որ «կասկած չկա, որ աղբբեջանական գրավյալ տարածքների ազատագրումը... կիրակի շատ արդյունավետ տնտեսական համագործակցություն տարածաշրջանում: Խորդվակաշարերը և ճանապարհային հաղորդակցությունը ամրություն կրկնայան տարածաշրջանը կներանեն»²¹: Նոյն տարվա հոկտեմբերին Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդյև նոր դիրքակատարում առաջարկեց Ռուսաստանի համար՝ Հայաստանի և Ադրբեյջանի միջև միջնորդության հարցում: Նույ 2008 թ. նոյեմբերի 2-ին մերձմուկովյան Մայնորդֆում Ռուսաստանի և Ադրբեյջանի նախագահների եռակողմնական արդյունքում ստորագրված հոչակագիրը՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավիրման վերաբերյալ թուրքական կողմից «ակնկալիքներին կարծես լրացնից հոյսեր էր տախի»²²: Հարկ է նշել, որ ողջ այս ժամանակահատվածում Ռուսաստանն ակտիվորեն աջակցում էր հայ-թուրքական բանակցային գործընթացին, քանի որ անհրաժեշտ էր համարում ռուս-վրացական պատերազմից հետո ստեղծված իրավիճակով՝ իր ռազմավարական գործընկեր Հայաստանի համար, որտեղ նաև ռուսական ռազմակայա է տեղադրված, այլնուրանքային ճանապարհային ուղիներ ապահովել: Ու թեև տարածաշրջանի ինտիմների շուրջ թուրքական կողմից հետ բանակցելու պաշտոնական Մոսկվան ընդգծում էր, որ հայ-թուրքական և հայ-ադրբեյջանական հարաբերությունների կարգավորումը երկու առանձին գործընթացներ են, այնուամենայնիվ փորձում էր տապալրություն ստեղծել, որ ռուսական աջակցությամբ ընթացող Ղարաբաղյան հարցի շուրջ Հայաստան-

²⁰ Shahin Abbasov, "Azerbaijan: potential pipeline deal could help settle Nagorno-Karabakh issue", 30 September, 2008, <http://www.eurasianet.org/departments/insight/article/eav093008a.shtml>

²¹ Մ. Չելիկոլա, Թուրքիա և Հայաստանը 2009 թ., Հայաստանը 2011, 2011, с. 181.

²² "Armenia, Azerbaijan Sign Joint Declaration Over Nagorno-Karabakh", November 2, 2008, http://www.rferl.org/content/Kremlin_Hosts_Peace_Talks_Over_NagornoKarabakh/1337420.html

Ադրբեյջան հանդիպումներում որոշակի առաջընթաց կա: Այսպիսի, օրինակ, ռուսական թերթերից մեկին տված հարցագործության ժամանակ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարել էր, որ երբ մոտ ապագայում Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը փաստ կդառնա, թուրքիան «կօգնի Հայաստանին նորմայ կապ հաստատել արտաքին աշխարհի հետ, բնակչության Անկարայի և Երևանի միջև պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատելու միջոցով: Զունձած երկու երեք հարց է մնացել, մասնավորապես՝ Լաշինի միջանցքի հարցը»²³:

Բնակչության, այս տիպի հայտարարությունները ԱՀԿ-ի ղեկավարությունը, որը ներգրավված էր հայ-թուրքական կարգավորման գործընթացում, օգտագործում էր թե՛ ներքին ընդդիմության ըննադատություններին պատասխանելու, և թե՛ «եղբայրական» Ադրբեյջանից հնչող դժգոհությունն ու անհանությունը «փարատելու» համար:

Ամփոփելով նշնոր, որ Ահմեյթ Դավթիթօլյուն, ով հանդիսանում էր ԱՀԿ-ի արտաքին քաղաքականության «ճարտարապետության իր «Բազմավարական խորք» աշխատությունում Մերձավոր Արևելյան ու Բայկանուրի հետ միասին Կովկասը դիտարկում է որպես Թուրքիայի մերձակա ցամաքային պահան: Սակայն, ըստ նրա, Թուրքիան չի կարողացել Կովկասը ընդունել իրեն մեկ ամրողական տարածաշրջան, այլ ընկալել է այն միայն հայ-ադրբեյջանական հակամարտության տեսանկյունից: Միևնույն ժամանակ նա նշում է, որ Ադրբեյջանը հանդիսանում է Կովկասում Թուրքիայի ամենակարևոր ռազմավարական դաշնակիցը, առանց որի Թուրքիան տարածաշրջանում իր հերթ մեծացնելու, նաև դեպի Կասպիա ծովի ավազան ծավալվելու հնարավորություն չի ունենա: Հետուառ, Ադրբեյջանի հողային կրուսադը Ղարաբաղյան պատերազմում Դավթիթօլյուն համարում է հետազոտականագիր փուլում նաև Թուրքիայի մեծագոյն կորուսադը²⁴: Նման մոտեցումը նոր չէր. Հայակային Կովկասի պետությունների հետ հարաբերությունները Թուրքիան դիտարկել է Կարսի պայմանագրով հաստատված համակարգի տեսանկյունից, և Թուրքիայի

²³ Լ. Կազարյան, Выйти из западной геополитической ловушки, <http://www.fondsk.ru/news/2008/10/19/9078-9078.html>

²⁴ Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası, Konumu, İstanbul, Küre Yayınları, 2003, s. 127-128.

քաղաքական վերնախավում սկսած 1993 թ.-ից գոյություն ունի այն մոտավախությունը, որ ՀՀ-ը, լուծեով ԼՂ հարցը, հանդես կգա Նախիջևանի, ապա և Կարսի, Էգդիրի, Արդահանի նկատմամբ պահանջատիրությամբ: Զգտելով կանխել նման զարգացումը՝ Թուրքիան որդեգրել է Հայաստանին ԼՂ-ում կատեցնելու քաղաքականությունը: Ինչպես նշում է Թուրք վերլուծարան Այրարս Գյորգյովուն, Թուրքիայում այս հարցում թե՛ քաղաքական դաշտում, թե՛ հասարակությունում առկա է համակարծություն (consensus)²⁵:

²⁴ The Istanbul Agreement on the Parliamentary Assembly of Turkic-Speaking Countries, 21.05.2016,

<http://www.turk-pa.org/documents/IstanbulAgreement.pdf>

²⁵ TÜRKPA-ի հիմնադրման համաձայնագիրը ստորագրել են Աղբեջանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Թյուրքիայի խորհրդարանների նախագահները: 2009 թ. սեպտեմբերի 29-ին Բարձրակ տեղի ունեցած TÜRKPA-ի լիազումար նշանը, որտեղ ստեղծվեցին համապատասխան կառույցներ, և իր գործներությունը սկսեց քարտուղարությունը, որի կենտրոնը դարձավ Բարձրակ: TÜRKPA-ի կառուցվածքի, գործառույթների և նպատակների մասին ավելի մանրամասն տե՛ս պաշտոնական կայքէջ՝ <http://www.turk-pa.org/>

²⁶ Türk Dili Konuşan Ülkeler Devlet Başkanları Dokuzuncu Zirvesi Nahçıvan Bildirisi, 21.05.2016, [http://turkkon.org/tr/TR/nahcivan-bildirisi-\(2009\)/4/911/911/290](http://turkkon.org/tr/TR/nahcivan-bildirisi-(2009)/4/911/911/290)

²⁷ “Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi Kuruluyor”, Cumhuriyet, Eylül 6, 2010.

²⁸ Türk Dili Konuşan Ülkeler İstanbul Zirvesi, 25.02.2016, <http://www.turkishnews.com/tr/content/2010/09/28/turk-dili-konusan-ulkeler-istanbul-zirvesi/>

²⁹ Türk Dili Konuşan Ülkeler Devlet Başkanları 10. Zirve Toplantısının Bildirisi, İstanbul, 16 Eylül 2010, 12.04.2016, http://www.turkkon.org/Assets/dokuman/01_a_IstanbulBildirisi_16Eylul2010_Turkce_20140418_102924.pdf

կան կյորության հարցերում, իրականացնել համատեղ գիտական ծրագրեր, ինչպես նաև համատեղ աշխատանքներ իրականացնել TÜRKSOY-ի հետ³⁰: Ստամբուլի համաձայնագրում հասուն հողվածով Նախիջևանի համաձայնագրի ստորագրման օրը՝ հոկտեմբերի 3-ը, ընդունվեց որպես թյուրքախոս երկրների համագործակցության օր և որոշվեց ամեն տարի նշել³¹: Ամենայն հավանականությամբ, սա պետք է դառնա թյուրքական միասնության խորհրդանշիր և սկիզբ հանդիսանա համարյութքական միջոցառությունների առանձնացման համար:

Հարկ է նշել, որ թյուրքախոս երկրների բոլոր գագաթնաժողովներում թյուրքիայի և Ադրբեյջանի կողմից բարձրացվում էր արցախյան հիմնախնդիրը, որը փորձում էին դարձնել գագաթնաժողովով ընարկվող օրակարգային հարցերից, բացի այդ՝ նպատակ ունենաւ համար Ադրբեյջանին սատարու որոշումների կայացմանը: Սակայն դա տեղի չընեցավ, և Ստամբուլի գագաթնաժողովով թյուրքական պետությունները հայտնեցին ինենց աջակցությունը հակամարտության խաղաղ կարգակրումներ ՍՎԿ-ի և ԵԱՀՆ-ի շրջանակներում, որը հայտարարվեց Կենտրոնական Ասիայի երկրների դեկավաների ճշշման ներքո³²: Թյուրքական խորհրդի շրջանակներում ևս Թյուրքիան և Ադրբեյջանը անդրադառնում են այս հարցին՝ նշելով Ադրբեյջանի տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը և ոչ ավելին:

Այսպիսով՝ Թյուրքիան, հրավիրելով թյուրքալեզու երկրների գագաթնաժողովները, նպատակ ուներ սերտացնել և ընդլայնել համագործակցությունը թյուրքական երկրների հետ, որն էլ միտված էր տարածաշրանքանում նրա ազդեցության հաստատմանը: Այս մասին վկայում են ստորագրված համաձայնագրերը, որոնք ընդգրկում էին քաղաքական, առևտունատեսական, կրթամշակութային և անվտանգության ոլորտները:

³⁰ Orhan Kavuncu, "10. Türk Zirvesi: Yeni Ümitlere Yelken Açıbilir miyiz?",

Türk Yurdu, Ekim 2010, Yill 99, Sayı 278, 13.04.2016,

<https://www.turkyurdu.com.tr/yazar-yazi.php?id=2075>

³¹ Türk Dili Konuşan Ülkeler Devlet Başkanları 10. Zirve Toplantısının Bildirisi, İstanbul, 16 Eylül 2010, 25.02.2016, <http://www.mfa.gov.tr/bildiri.tr.mfa>

³² Г. Демоян, "Тюркские саммиты: цели, задачи, приоритеты и позиция в карабахском вопросе", Бюллетень научно-образовательного фонда «Нораванк», N 10 (16), 2005, с. 46-54.

Նման գործողությունները պետք է հանգեցնեին թյուրքական աշխարհի ստեղծմանը՝ Թյուրքիայի գլխավորությամբ: Թյուրքիայի ծեռքերումներն ավելի քիչ են, իսկ ծախողությունը՝ տեսանելի: Թյուրքիան չկարողացավ սերու համագործակցության դաշտ տեղափոխել թյուրքական երկրների հետ հարաբերությունները, հետևաբար թյուրքական աշխարհի միավորամբ դի հոգանու ներք, առայժմ կմնա լոկ գաղափար: Մյուս կողմից, որոշ ծեռքերումներ ունեցավ, մասնավորապես հաջողվեց կանոնավոր հիմքերի վրա դնել թյուրքական երկրների հանդիպումները՝ ի դեմս Թյուրքական խորհրդի, և ամրապնդել համագործակցությունը, հատկապես մշակութային ոլորտում:

ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԵՐԿՐՍԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՄՆԵՐ. ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Թյուրքալեզու երկրների համագործակցության խորհրդը հանդիսանում է Վերոնշյալ գագաթնաժողովների հիմնական արդյունքը: Ինչպես արդեն նշել ենք, Թյուրքիայի հիմնական նպատակներից էր թյուրքական երկրները միավորել մեկ ընդհանուր միության կամ կազմակերպության շրջանակներում: Թեև հաջողվեց ստեղծել քննողով միայն թյուրքական կազմակերպություն, սակայն ոչ բոլոր թյուրքական երկրներն են անդամակցում, մասնավորապես Թյուրքմենստանը և Ուզբեկստանը: Թյուրքական խորհրդը հանդիսանում է փակ տարածաշրջանային կազմակերպություն, քանի որ դրան կարող են անդամակցել միայն թյուրքական պետությունները³³: Խորհրդի նպատակն է միավորել թյուրքական երկրներին՝ հիմք ընդունելով նրանց պատմական, մշակութային, էթնիկական և լեզվական ընդհանուրությունները: Այլ կերպ ասած՝ նշված ընդհանուրությունները համարվում են թյուրքական աշխարհի ստեղծման հիմնարարերը և միաժամանակ պահպան անդամակցության հայեցակարգի հիմքում:

Թյուրքալեզու երկրների համագործակցության խորհրդի առաջին գագաթնաժողովը տեղի ունեցավ 2011 թ. հոկտեմբերի 21-ին՝ Ղազախստանի Ալմաթի քաղաքում «Տնտեսական համագործակցություն» խորպորու: Հանդիպման սկզբում անդամակցության հայեցակարգի հիմքում:

³³ Süleyman Sırı Terzioğlu, "Uluslararası Hukuk Açısından Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi", Uluslararası Hukuk ve Politika, Cilt 9, Sayı 36, 2013, s. 54-57.

Երկրների դեկավարները նշեցին թյուրքալեզու երկրների միջև հարաբերությունների զարգացման ու ամրապնդման մասին՝ հիմնված պատմական, էթնիկական, լեզվական և մշակութային ընդհանուրությունների վրա: Մյուս կողմից, հաստատվեց, որ Թյուրքական խորհրդը համարվում է ամրողացած կազմակերպված միջազգային կազմակերպություն, որն ունի իր կառուցները և գործունեության բնագավառները: Այսաթիվ հայտարարությունում առանձնացվում էին տնտեսական, անվտանգության, սոցիալական ու մշակութային խնդիրները: Առավել մեծ ուշադրություն դարձվեց տնտեսական համագործակցության խնդիրներին, ոտքի կարևորվեց թյուրքական գործարար խորհրդի (Turkic Business Council) հիմնադրումը: Հանդիպման ժամանակ մասնակիցները քննարկեցին միջազգային ծրագրեր, մասնավորացած Բարու-Թրիխիս-Զեյխան նավթային ուղղություն, Բարու-Թրիխիս-Հզրում գազի խողովակաշարի անցկացման վերաբերյալ: Բացի այդ՝ նշվեց Բարու-Թրիխիս-Կարս երկաթուղու հիմնադրման մասին, որը պետք է կապող օրակ հանդիսանա թյուրքական երկրների միջև և նպաստի եվրասիական տարածաշրջանում առևտորի ու տնտեսության զարգացմանը: Առանձնահատուու նշանակություն տրվեց TURKPA-ի գործունեությանը, որը համակարգող մարմին է անդամ-երկրների խորհրդարանների միջև: Թյուրքական աշխարհում ընդհանուր մշակույթի կազմակերպման խնդիրները դրվեցին TURKSOY-ի վրա: Նախատեսվեց ստեղծել Թյուրքական միջամասարանական միուրյուն (Turkic Interuniversity Union), որի նպատակն էր զարգացնել հայրենությունները գիտական ինստիտուտների, կրթական հաստատությունների ու գիտնականների միջև, ինչպես նաև փոխանակել ուսանողներ: Համաձայնություն ծնող թքվեց նաև հիմնադրել Թյուրքական գիտական հետազոտությունների ֆոնդ (Turkic Scientific Research Fund), որի նպատակն էր ուսմանափել ու զարգացնել թյուրքական երկրների գիտական ներուժը³⁴: Փաստորեն այս առաջին հանդիպման ընթացքում առանձնացվեցին կոնկրետ խնդիրներ, որոնց հրականացումը հանձնարարվեց Թյուրքական խորհրդի համապատասխան կառուցներին:

³⁴ Türk Dili Konusan Ülkeler İşbirliği Konseyi 1. Zirvesi Bildirisi Almatı, 21 Ekim 2011, 27.03.2016,
http://www.turkkon.org/Assets/dokuman/I_Zirve_Bildirisi_TR_20140418_1027_27.pdf

Թյուրքական խորհրդի երրորդ գագաթնաժողովը, «Կրթական, գիտական և մշակութային համագործակցություն» խորագրով, տեղի ունեցավ 2012 թ. օգոստոսի 22-23-ին՝ Ղրղզստանի մայրաքաղաք Բիշկեքում: Հայտարարության սկզբում նշվում է թյուրքական ժողովուների միջև միասնության ամրապնդման ցանկությունը՝ ընդհանուր պատության, լեզվի, ինքնության և մշակույթի հիմքերով: Դարձյալ նշվեց տնտեսության, մշակույթի, կրթության ու գիտության բնագավառներում համագործակցության մասին, ինչպես նաև անդրադարձ կար արտաքին քաղաքական խնդիրներին: Առաջարկվեց հիմնադրել Թյուրքական մշակութային ժառանգության ֆոնդ, որը պետք է աջակցեր թյուրքական ակադեմիայի և TÜRKSOY-ի ծրագրերին ու գործունեությանը: Խնդիր դրվեց հասնել լայնամասշտար համագործակցության կրթության ու գիտության բնագավառում, հատկապես աջակցել միանալուն այրութենի հաստատմանը և դասագրեի ստեղծմանը³⁵: Այս նկատառում կ կարևորվեց թյուրքական ակադեմիայի դերը, որը պետք է հանդիսանա գիտական հարյաք թյուրքական պատության ու լեզվի ուսմանափելության համար: Առաջարկվեց թյուրքական պատության վերաբերյալ ուսումնական ծեռնարկների հրատարակելու³⁶: Լեզվի և պատմության առանձնացումը պատահական չէր, քանի որ երկուսն էլ ծևակդրում են մոտածողություն և կարող են ընդհանուր գաղափարական հիմքեր նախապատրաստել ապագայի համար: Այս հանդիպմանից ակնհայտ է դառնում, որ Թյուրքական խորհրդին ուղարկության կենտրոնում է պահում համագործակցության բոլոր ոլորտները և արդեն ստեղծված կառուցների միջոցով փորձուած է կյանքի կոչել նախկին գագաթնաժողովներում առաջարկված ծրագրերը:

Թյուրքական խորհրդի երրորդ գագաթնաժողովը տեղի ունեցավ Ադրբեյջանի Գարավա քաղաքում 2013 թ. օգոստոսի 16-ին՝ «Երիտասարդություն» խորագրով: Ստորագրված հայտարարությունում շեշտվուած էր մշակույթի, սպորտի, գիտության և կրթության ոլորտներում համագործակցության մասին,

³⁵ Türk Dili Konusan Ülkeler Zirvesi Üzerine, 25.02.2016,
<http://www.tuicakademi.org/turk-dili-konusan-ulkeler-zirvesi-uzerine/>

³⁶ Türk Konseyi İkinci Zirvesi Bildirisi Biskek, 23 Ağustos 2012, 02.04.2016,
www.turkkon.org/Assets/dokuman/Biskek_Bildirisi_Turkce_imzali_20140418_102501.pdf

մասնավորապես ուշադրության կենտրոնում էր պատմություն ու գրականություն առարկաների միասնական ռատմանական ծեռնարկների պատրաստման խնդիրը: Անդամ-երկրների միջև տնտեսական համագործակցության ամրապնդման համար թյուրքական խորհրդի կազմում ստեղծվեցին առանձին խմբեր: Դարձյալ առաջնային համարվեց տրանսպորտային հաղորդակցության խնդիրը, և խորհրդի անդամ-երկրների տրանսպորտի նախարարները ստորագրեցին տրանսպորտի զարգացման համար միասնական համագայնագիր: Այս հանդիպման ընթացքում ընտարկվեց ևս մեկ կարևոր հարց, որը վերաբերում էր թյուրքախոս սիյուռիքն: Որոշվեց ակտիվացնել հարաբերությունները թյուրքախոս սիյուռություն և մշակել ու իրականացնել համագործակցության ծրագրեր³⁷: Փաստորեն, կարող ենք ասել, որ թյուրքական խորհրդը հավակնում է որոշակի համակարգործ գործառույթներ ստունծնել նաև թյուրքախոս սիյուռություն:

Թյուրքական խորհրդի անդամ-երկրների հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ 2014 թ. հունիսի 5-ին Թյուրքիայի Բողոքում քաղաքում՝ «Համագործակցություն տուրքմի դուրսում» խորագրով: Ինչպես նախորդ հայտարարություններում, այնպես էլ այս անգամ սկզբից վերահստատվեց, որ թյուրքալեզու ժողովրդությունների ուժը կայսնում է ընդհանուր պատմության, լեզվի, մշակույթի և ավանդույթների մեջ: Այս հանդիպմանը մասնակցում էր նաև Թյուրքմենստանի նախագահը, սակայն նա չմիացավ խորհրդին և շարունակեց պահանձնել դիտորդի կարգավիճակը: Իսկ լոգեթասունը դեռևս վերջնականացնեց հրաժարվել խորհրդին անդամակցեցից³⁸: Բողոքում համաձայնագրում առանձնացվեցին տնտեսության, արտաքին քայլականության և անվտանգության վերաբերու քաժններ, սակայն հիմնականում ուշադրություն հատկացվեց տուրքմի ոլորտին, և անդամ-երկրները որոշեցին ծրագրեր մշակել այն

գարգացնելու համար³⁹: Կարող ենք ասել, որ տուրքմը խրախուսվում էր թյուրքական պետությունների միջև ոչ միայն տնտեսական նկատառումներից ենթով, այլև այն ենթադրում էր թյուրքական մշակույթի ու քաղաքակորության ճանաչումը ու տարածումը, հատկապես երիտասարդության շրջանում: Այս գագաթնաժողովում գլխավոր քարտուղարի պաշտոնում Հայլի Աքընջընի փոխարքնեց Ռամիլ Հասանովը:

Թյուրքական խորհրդի հիմքերուն գագաթնաժողովը տեղի ունեցավ Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում 2015 թ. սեպտեմբերի 11-ին: Ստորագրված հայտարարությունում վերահստատվեց, որ հետագայում համագործակցության ամրապնդումը ու միավորումը տեղի է ունենալու ինքնության հիման վրա, իսկ դրա հիմքում ընկած են թյուրքական ժողովրդիների ընդհանուր պատմությունը, լեզուն, մշակույթը և ավանդույթները: Այս հանդիպման արդյունքում ստորագրված փաստաթույուն ևս կարևորվեց տնտեսական համագործակցությունը շեշտեղվ տրանսպորտային հարդարակցության և էներգակիրների խնդիրը: Առաջարկվեց ավելի մեծ թվով երիտասարդների ընդդեմի խորհրդի կազմակերպած մշակության, կրթական ու գիտական ծրագրերում, մասնավորապես առանձնացնեցին երիտասարդական ու սպորտային նախագծերը: Այս առանձին որոշվեց կազմակերպել երիտասարդական ճամբարներ: Աստանայում պայմանավորվածություններ ծնոր թերվեցին տեղեկատվության, զանգվածային լրատվության միջոցների և հեռուստատեսության ընազավառներում միասնական ծրագրերի ստեղծման շուրջ⁴⁰: Սա ենթադրում է որոշակի նպատակներով ու գաղափարներով հեռուստահաղորդումների պատրաստում ու հետարձակում թյուրքական երկրների հիմքագրամանն ուղղված կարևոր գործն է:

Այդու Թյուրքական խորհրդի հիմնարկումը նոր միտու էր թյուրքախոս երկրների գագաթնաժողովների համապատկերում, որը համապատասխանում էր տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին: Թյուրքական խորհրդի նպատակը

³⁷ Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi Üçüncü Zirve Bildirisı, Gebele, Azerbaycan, 02.04.2016, http://www.turkkon.org/Assets/dokuman/format_deklarasyon_TR_20140418_102229.pdf

³⁸ В. Панфилова, “Союз тюркоязычных стран усилился Туркменистаном”, Независимая газета, 6 июля, 2014.

³⁹ Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi Dördüncü Zirvesi Taslak Bildirisı, Bodrum, Türkiye, 12.04.2016, http://www.turkkon.org/Assets/dokuman/BODRUM_BILDIRISI_TR_20141021_172609.pdf

⁴⁰ Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi Beşinci Zirve Bildirisı, Astana, Kazakhstan, 12.04.2016, www.turkkon.org/Assets/dokuman/astana-tr.pdf

է որոշակի գործառոցներ ստանձնել եվրասիական տարածաշրջանում մասնակցելով այդ տարածաշրջանում ընթացող գործնթացներին և համախմբել թյուրքական երկրներին: Սա, ըստ Էռյան, թյուրքական աշխարհի ստեղծման նոր միտում է, քանի որ Թյուրքական խորհրդող հետապնդում է այն նպատակները, որոնք առաջ էին քաշվել դեռևս առաջին գագաթնաժողովներում: Անշոշտ, նաև կազմակերպության ստեղծմամբ փորձ է արվում ավելի գործնական հիմքերի վրա դնել թյուրքական երկրների միջև առկա հարաբերությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թյուրքայեցու երկրների գագաթնաժողովները դիտարկվում են հետխորհրդային տարածաշրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության մաս և հետապնդում են հետևյալ նպատակները՝ ամրապնդել թյուրքական երկրների հետ հարաբերությունները, զարկ տալ բազմաթիվ համագործակցությանը, հիմքեր ստեղծել թյուրքական աշխարհի ձևավորման համար, համեմել թյուրքական երկրների միասնությանը, բարձրացնել Թուրքիայի հետխակությունը և ծեղոք թբել ազդեցություն: Օգտագործելով Թուրքիայի և թյուրքական երկրների միջև առկա պատմական, էթնիկական, լեզվական ո ճշակութային ընդհանրությունները՝ գագաթնաժողովներն ունեն համարյուրքական ընույթ, քանի որ դրանց մասնակցում են միայն թյուրքական ծագմամբ երկրները: Այս ամենը նկատի ունենալով կարող ենք ասել, որ գագաթնաժողովների գաղափառական հիմքը հանդիսանում է պանթյուրքիզմը, քանզի թյուրքական մասնության ուղղված ցանկացած գործողություն համարյուրքականության դրսնորում է:

Կարծում ենք, գագաթնաժողովների արդյունքներն այնքան ել գոհացուցի չեն Թուրքիայի համար, քանի որ թյուրքական երկրների հետ շիստատվեց ակնկալվող համագործակցությունը, իսկ առաջադրված ծրագրերն իրավործվեցին մասսամբ: Արյոններում Թուրքիան կարողացավ թյուրքական երկրներամ հաստատել իր ներկայությունը: Կարևոր էր Թյուրքական խորհրդի հիմանդրում, սակայն այն ևս չէ ընդգրկում թյուրքական բոլոր երկրներին, ավելին՝ անդամ-երկրներն անդամակցում են տարածաշրջանային մյուս կազմակերպություններին և սերտ հարաբերություններ ունեն այլ երկրների:

մասնավորապես Ռուսաստանի հետ: Նման պայմաններում մեծ տեղ է հատկացվում կրթամշակութային ոլորտին՝ փորձելով նախ այս հիմքերով հասնել թյուրքական աշխարհի ստեղծմանը: Այսինքն՝ սա ենթադրում է հասնել միասնության հոգւոր-մշակութային առում: Թեև թյուրքական դեկավարությունը մեծ ոգևորությամբ սկսեց հրավիրել գագաթնաժողովները, սակայն հետազոտություն ակնհայտ դարձավ, որ դրանը չեն կարող լուծել Թուրքիայի հետապնդած նպատակները և աստիճանաբար վերածվեցին ավելի շատ ընկերային հանդիպությունների:

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՍՈՒԿՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (2005 թ.)**

Թուրքիայի իշխանությունների՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կամեցման մարտավարության կարևորագոյն բաղկացուցիչը ժխտողականությունն է: Թուրքիան պարբերաբար օգտագործում է միջազգային տարրեր հարդակները և՝ Հայոց ցեղասպանության հերթան, և՝ հակահայ քարոզություն իրականացնելու համար: Մեծ Եթոնի 90-րդ հիշատակնան տարեթիվի հայկական միջոցառություններին հակազդեցի համար թուրքական իշխանությունները համակարգեցին իրենց մարտավարական ողջ գործիքազմը և՝ երկրի ներսում, և՝ միջազգային ասապերճում ծևափերելով օրենսդրական նախաձեռնություններ և ինստիտուցիոնալ կառուցներ՝ ժխտողական քաղաքանության արշավի համար՝ գործարկելով ինչպես հին, փորձված, այնպես է նոր մեթոդներ:

Եվրոպական երկրների դրական արձագանքը նպաստեց Ցեղասպանության ճանաչման գործընթացի ծավալմանը, եթե ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, որպես ուսումնակարգական հիմնախնդիր, դրվեց Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգությունը: 2000 թ. նոյեմբերի 7-ի Ֆրանսիայի Սենատի օրինավագիծը և այնուհետև նոյեմբերի 15-ի Եվրախորհրդարանի¹ Թուրքիայի անդամակցության առաջընթացի վերաբերյալ քանաձեռ առաջ բերեցին Թուրքիայի կոչու հակազդեցությունը: Անհայտ էր, որ մի շարք պետությունների և միջազգային կառուցների կողմից ընդունված Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման բանաձեռը սպառնում էին թուրքական պետության «հեղինակության»՝ ուստի ԱՀԿ-ի իշխանակարման առաջին շրջափակում Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը դարձավ պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ:

Հայոց ցեղասպանության ժխտողականության գաղափարական հիմքը մշակվում է հիմնականում թուրքական պատմական ընկերության (ԹՊԸ) կողմից հրատարակվող բազմաթիվ «գիտական» աշխատություններում, շրջանավում և ըննարկվում և ներթուրքական, և՝ միջազգային տարրեր դիսկուրսներում: ԹՊԸ պարբերաբար աշխատանքներ է հրականացնում տարրեր երկրների արխիվներում և, կատարելով «համապատասխան ընտրություն», հրատարակում փաստաթղթերի ժողովածներ, որտեղ «հիմնավորվում և ապացուցվում է հայերի կողմից թուրքերի ցեղասպանության իդողությունը»: Այդ աշխատությունները բարգանվում են տարրեր լեզուներին:

2005 թ. մարտի 1-ից Հանրապետական ժողովադատական կուսակցությունը Թուրքիայի համար օրակարգային խնդիր դարձած «Հայկական հարցի լուծում գոյներու համար» խորհրդարանում ըննարկումներ նախաձեռնեց: ՀՀԿ նախագահ Բայրայը հայտարարեց, որ «1915թ. դեկտեմբերի 90-րդ տարեթիվին ԱՄՆ-ի և Եվրոպայի հայկական խմբավորումները նոր թափ են հաղորդել Թուրքիայի օսմանյան շրջանում հայերի ցեղասպանության ճանաչման քարոզարշավին: Թուրքիան արդեն հոգնել է այդ խնդիրից: Հավատացած ենք, որ այս գործընթացը կարելի է ուղղել հակառակ ուղղությամբ»²: ՀՀԿ նախաձեռնությամբ սկսված «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության պետությունի շորով» ըննարկումներն ընթացան տարրերը ծևազափերով և ընդհատումներով տևեցին շուրջ երկու ամիս: Պատը է նշել, որ դրանք դեռևս ամբողջովին գաղտնագերծված չեն, ելութեա ներկայացված են միայն հասուլածարար, սակայն այսքան հսկ թույլ է տալիս բավարար պատկերացում կազմել բուն գործընթացի վերաբերյալ:

Թուրքիայի ազգային մեծ ժողովի ըննարկումները սկսեց ՀՀԿ պատգամավոր Շուրբյու Էլեբայը, ով որոշ ժամանակ պաշտոնավարել է որպես ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան: «Հայաստանի հետ հարաբերություններում որևէ դրական տեղաշարժ ակնկալի պետք չէ, քանի դեռ Երևանը պատրաստ չէ պատմաբանների երկխոսությանը, իսկ հայ պատմաբանները «չեն ցանկանում մաքրել իրենց պատմությունը»: Նա նաև Հա-

¹ Ermeni araştırmaları, <http://www.ttk.gov.tr/index.php?Page=Sayfa&No=90>

² Yetkin Murat, Soykırım" için atak, <http://www.radikal.com.tr/yazarlar/murat-yetkin-soykirim-icin-atak-739454>

յոց ցեղասպանության ճանազման դեմ թուրքական քաղաքականությունը ակտիվացնելու կոչ արեց: Ըստ էթերադի՝ «հայկական պնդումները հիմնված չեն լուրջ փաստաթղթերի վրա»: Նա առաջարկեց հայ և թուրք պատմաբանների խոմը ստեղծել, որը կատարմասիրի ոչ միայն թուրքիայի և Հայաստանի, այլև ԱՄՆ, Անգլիայի, Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի արխիվները: Նախկին դիվանագետը թուրքական պնդումներում իր կատարած ուսումնասիրությունների արդյունքում «համազվել» է, որ պատմական հրորդությունը այլ է, հայերն են վայրագություններ կատարել թուրքերի նկատմամբ: «ԺՇԿ պատգամավորը «հոյս հայունեց» որ իր կուսակցության հախածեռնությունը կընդունի ԱՀԿ գործունեության դաշտը և հնարավորությունը կընձեռի հայ-թուրքական հարաբերությունները դուրս բերել «ցեղասպանություն» բառի ստվերից»³:

ԹԱՍԺ-ում Հայկական հարցի շորջ ըննարկումը շարունակեց թուրքական պատմական ընկերության ախազան Յ. Հայազոյուն: Թուրքական խորհրդարանի ԵՄ ինստեգրման և արտաքին հարաբերությունների հանձնաժողովների անդամների հետ հանդիպման ժամանակ, որին ներկա էին նաև խորհրդարանի նախազան Բ. Արդյուն ու փոխնախազան Ի. Ավիթերինը. Հայազոյուն հայտարարեց, թե «ուսումնասիրելով 50 հազար պատմական փաստաթույր» դրև տեղ չեն հանդիպել հայերի նկատմամբ ցեղասպանություն իրականացնելու վկայության»: Մանրամասն տվյալներ ներկայացնելով ԹՊԸ կողմից հրատարակված վերջին «Հայեր. աքսոր և գայդ» աշխատությունից Հայազոյուն ևս պատգամավորներից պահանջեց Ցեղասպանության իրողությունը ուսումնասիրող հանձնախոմը նախածեռներ՝ հավելելով, որ «Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ծանր զայտ է և ոչ ցեղասպանություն»⁴:

Հայոց ցեղասպանության շորջ հաջորդ ըննարկումը թուրքական խորհրդարանում կայացած Թորդիսի վարչապես էրդողանի և ԺՇԿ նախազան Բայրայի միջև մարտի 8-ին: Հանդիպմից հետո դրագողներին տրված ասուլիսի ժամանակ ԱՀԿ ղեկավարը մանրամասնեց իր դիրքորոշումը. «Հայերը համոզված չեն ցեղասպանության վերաբերյալ իրենց պնդումներում: Եթեն վստահ ինքին, կրացեին արխիվները, ինչպես

մենք... Խեղաթյուրված անցյալի, արյան և ատելյության հիման վրա հնարավոր չէ ապագա կառուցելի»: Էրդողանը մեկ անգամ ևս շեշտեց պատմաբանների հանձախումը ստեղծելու անհրաժեշտությունը, որը կիամակարգի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի հաստատմանը կներկացնի արխիվների վրա հիմնված ուսումնասիրությունների արդյունքները: ԱՀԿ առաջնորդը վստահություն հայտնեց, որ «Ցեղասպանության միջազգային ճանաչման քարոզակը ապարդյուն կինի, քանի որ հայերի պնդումներն անհիմն են»: Նա միննոյն ժամանակ հավաստիացեց, որ իր կառավարությունն անելու է ամեն հնարավորը այդ քարոզարշակը կատեցնելու համար՝ հայտարարելով՝ «այսօր օրակարգություն կարուի կարևոր խնդիր չկա»⁵:

Էրդողանը տեղեկացրեց նաև, որ ՀՇԿ նախազանի հետ ըննարկելի են «այսպես կոչված, Հայոց ցեղասպանության անհիմն պնդումների» դեմ պայքարում գործողությունների նախագիծ, որն արտաքին գործերի նախարարությունում լրամշակվելոց հետո կներկայացվի հանրությանը:

ՀՇԿ առաջնորդ Բայրայը, Նշելով, որ վարչապետի հետ որևէ այլ հարց չեն ըննարկել, կարևորեց Հայոց ցեղասպանության պնդումների դեմ պայքարում իշխանությունների և իր կուսակցության համատեղ ու միասնական գործունեությունը՝ հայտարարելով. «Ցեղասպանության միջազգային ճանաչման գործնարդության մասին քաղաքական դրայապահությանը ունենալու այն քացառական հայկատական կազմակերպությունների աշխատանքի արդյունք է՝ գործ որևէ գիտական հիմնավորումից»: Բայրայը ևս անդրադարձակ հայկական արխիվներին. «Բացե՛ք արխիվները, տեսնենք՝ ինչ կա: Մենք ցանկանում ենք այս հարցի խկույրան ճշմարտությունը ցուց տալ ամրող աշխարհին»⁶:

Փաստորեն Հայկական հարցը անվերապահորեն միավորեց քաղաքական անհաջող ախտյաններին. ՀՇԿ-ն միակ ընդիմանիդր ուժն էր, որ չէր ընդունում և մշտապես կոշտ ըննադատության էր ներարկում վարչապես էրդողանի կառավարության և՝ արտաքին քաղաքականությունը, ընդ որում բոլոր ուղղություններում, և՝ ներքաղաքական սոցիալ-տնտեսա-

³ Նոյն տեղում:

⁴ Ermeni soykırımı iddiaları bir kez daha belgelerle yalanlandı, http://www.tbmm.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=18646

⁵ Başbakan Erdoğan ermeni soykırımı iddiaları konusund CHP ile ortakbir tavır bensimdediklerini bildirdi,

http://www.tbmm.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=19064

⁶ Նոյն տեղում:

կան բոլոր նախագծերը, մասնավորապես քրդական նախաձեռնությունները:

Թուրքիայի ազգային մեծ ժողովով Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի ուժիների շուրջ քննարկումները շարունակեց հատուկ հրավիրված ամերիկացի պատմաբան Ջայուն Մաքրարթին, ով հայտնի է իր հականայկական դիրքորոշմամբ և Հայոց ցեղասպանության ժմտման իր տեսություններով։ Քննարկումը, որին ներկա էին նաև արտաքին գործիքի նախարար Ա. Գյովր, փոխվարչապետ Մ. Այլ Շահինը և այլ քարտասութեան պաշտոնյաներ, բացեց խորհրդարանի նախագահ Բ. Արքսը, ով պարզաբանեց «Հայկական հարցի ճշմարտությունը՝ հայտարարելով. «Թուրքիան իր պատմության որում շշանում ցեղասպանություն չի իրականացրել»⁷:

Արքսը շեշտադրեց Հայկական սփյուռքի գործներության դեմ պայքարի անհրաժշտությունը՝ ներկայացնելով որոշ երկների խորհրդարաններում և միջազգային կառույցներում իրենց արձանագրան հաշորժությունները։

Այս ընտարկման հերթական անգամ ելոյց ունեցավ նաև ՀՀԿ առաջնորդը։ Չնայած նրա ելոյթը, ինչպես և խորհրդարանի նախագահինը, ներկայացված է հատուկածարար, այնուամենայնիվ այստեղ բավականին կոչու շեշտադրումներ կան։ «Եթե Հայաստանը ցանկանում է Թուրքիայի հետ քարհրացիական հարաբերություններ ծավորել և զարգացնել համագործակցությունը, ապա պետք է ընդունի մեր առաջարկը ընդհանուր պատմությունը վերագնահատելու վերաբերյալ»⁸։

Պետք է նշել, որ իր նախաձեռնությամբ կազմակերպված խորհրդարանական այս քննարկումներում ՀՀԿ առաջնորդը և պատգամավորները բավականին ակտիվ մասնակցություն են ունեցել և հանդես եկել ակնհայտ հակահայ, նոյնիսկ թշնամական ելոյթներով և ճաներով։

Ինչ վերաբերում է Զ. Մաքրարթի ելոյթին, ապա «պատմության ռահվիրայի»՝ «Հայկական հարցի իսկության» վերաբերյալ մեկնությունները դեռևս գաղտնագերծված չեն։

Քննարկմանների հաջորդ փուլը թուրքական խորհրդարանի ԵՄ ինտեգրման և Արտաքին հարաբերությունների հանձնաժողովների անդամների և «ծագումով հայ» գրող-

⁷ J. McCarthy, "Ermeni sorununun gerçegi" ni anlatti http://www.tbmm.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=20182

⁸ Նոյն տեղում։

լրագրողների⁹ ու Հայկական հարցի փորձագետն, նախակին դեսպանների միջև էր։ Այս հանդիպման մանրամասները հայտնի չեն, բացառությամբ ԵՄ ինտեգրման հանձնաժողովի նախագահ Ա. Ռ. Ավարյոնի երոյթից, ով ակնարկել է, թե հայ լրագրողները, որոնք «սիրված են Թուրքիայում, ունեն անկախ բաղադրական հայացքներ, խոսր ազատություն և ներքաշված չեն ցեղասպանության քարոզարշավում», կարող են կարևոր դրակատարում ունենալ «հայ-թուրքական քաղաքակիրո երկխոսության ծավալման գործընթացում»¹⁰։

Հայազգի լրագրողներին հրավիրելով խորհրդարանական քննարկումներին՝ ԱՀԿ ղեկավարությունը փորձեց հերթական առաջանային տարածական և արքերակել հայությանը՝ իր համար «ընդունելի և թիրախային» հասկանների։

Այս միտումը ընդգծեց նաև արտաքին գործերի նախարար Ա. Գյովի ելոյթում, որը, թերևս, այս խորհրդարանական լուսականությունը էր հայությունը սկսեց՝ «պարզաբանելով, թե «հայ ասելով» բոլորին նկատի չլնի իր երկրի ծագումով հայ քաղաքացիներին, ովքեր ուժ դար շարունակ իրենց ներդրումն են ունեցել ընդհանուր արվեստի, գիտության, առևտորի և այլ բնագավառների զարգացման գործում»։ Թուրքիայի գլխավոր դիվանագետը պատմական ակնարկ կատարեց «ներկայացնելով, թե 11-րդ դարից մինչև 19-րդ դարի վերշերը հիմային սիրով և փոխադարձ վստահությամբ և խաղաղությամբ են ապրել երկու ժողովուրդները։ Նա անդարձարձակ Օսմանյան կայսրության շրջանում հայերի սոցիալ-քաղաքական «հատում» կազմակերպված էր, հայ ազգային կոսակցությունների, կոմիտեների գործներությամբ և Առաջին աշխարհամարտից առաջ տեղի ունեցող աշխարհաբարական զարգացումներին։ Նա նաև ընդգծեց, թե ինչպիսի գգնաժամում էր հայտնվել կայսրությունը Ռուսաստանի զավթողական պատերազմերի և Արևմտյան տերությունների քաղաքական համերի հետևանքով։ Հայ կամավիրական գորագնդերը Ռուսական կայսրության Արևմտյան Անտառիա ներխուժման ժամանակ, Գյովի ներկա-

⁹ Հանդիպմանը մասնաւորում էին թուրքական «Zaman» թերթի լրագրող Էյթին Մահմետացն, «Ակս» թերթի գլխավոր համագիր Հրանտ Դիմիր և գրող Լևոն Դերենցանը։ Ներկա էր նաև արդեն լուծարված Հայ-թուրքական հայտնության հանձնաժողովի անդամ Գյուղնյութ Աքրածը։

¹⁰ Սյուն կոմիսյոն բաշխութեան Ալաբոյն։ «90 yillik Ermeni sorununun çözümüne 15-20 yıllık bir süreçte ulaşılabilir», http://www.tbmm.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=21043

յացմամբ, այդ «պատրվակով» անպաշտապն կանանց ու երեխաների հսկական սպանեց են իրականացրել, որը հետագայում արդեն ֆրանքահիների աջակցությամբ տևել է մինչև 1921թ.: Հայերի կողմից կազմակերպված կոտորածներին որոշ վայրերում թուրք ազգաբնակչությունը փրկվել է դիմակային, ինչն արդեն վեր է ածվել գիշված բախումների՝ երկարած զգայի մարդկային կորուստներ պատճենելով: Հայոց պատրիարքարանին, պատզամավորներին և այլ հայ առաջնորդներին ուղղված օմանյա կատավարության հորդրությունը կանխել հայերի կողմից մոտավանական քաղաքացիությունը, 1915 թ. ապրիլի 24-ին կատարված տարած «հայրկարգված» փակել է Հայկական խորհրդությունը և ծերբակալել 235 անդամների հակապեսական գրոժունենության մեջարդանորոշը: «Ահա այս օրն է ամեն տարի նշվում հայերի կողմից դրան, այսպես կոչված, ցեղասպանության տարեիցից օր. ապրիլի 24-ը, այսինքն՝ Հայկական խորհրդությունի փակման և դրանց անդամների՝ այդ ժամանակների ահարեկիչների ծերբակալման օրը»¹¹:

Ժարութակելով պատմության խեղաթյուրմամբ հագեցած իր ելոյթը՝ նախարարը հիշատակեց 1948թ. դեկտեմբերի 9-ին ՍԱՀ-ի «Յեղասպանություն հանցագործության կանխման և պատժման կոնվենցիան»՝ հայտարարելով, որ 1915թ. իրադարձությունները բացարձակապես չեն համապատասխանում այս դրույթներին:

Այնուհետև Գյուլ անդրադարձավ «հայ ահարեկչական» խմբավորմաների, մասնակիրապես ԱՍԱՀ-ի գրոժունեթյուններին, որոնք միշտված էին «այսպես կոչված, Հայոց ցեղասպանության» վրա միջազգային հանրության ուշադրությունը գրավելուն:

Խորհրդարանում Գյուլ ելոյթի թիրախը, թերևս, հայկական սփյուռք էր՝ իր հասարակական, քաղաքական, մշակութային և գիտական կառուցությունը գրոժունենությամբ, որոնք էապես ազդում են միջազգային հասարակական կարծիքի ձևավորման վրա և վասնում թուրքիայի հեղինակությանը: Այդ շրջանում տարբեր երկրների խորհրդարանների և այլ միջազգային կառուցների կողմից Հայոց ցեղասպանության ճա-

նաշման վերաբերյալ ընդունված քանաձեւը և որոշակները նախարարը սիյուռքահայ կազմակերպությունների հետևողական լրիստական աշխատանքի արդյունք համարեց:

Թուրք դիվանագետն ընդգծեց այն «բարյացկամ» վերաբերյալը, որ Ծուրքիան ցուցաբերել է Հայաստանի նկատմաման՝ անկախացումից ի վեր, նոյնիսկ «Եղբայր Ալբրեխանի տարածքների 20 տոկոսը զավթելոց հետո է, Աև ծովի ցամացային սահման չունենալոյն պայմաններում հրավիրելով ՄՏՏՀ և Ստամբուլում Հայաստանի ներկայացուցույթուն բացելով»:

Հայ-բուրգական հարաբերությունների կարգավորման գործնաքանի ծախողման ողջ պատասխանատվությունը բարդելով Հայաստանի Հանրապետության և սիյուռքահայ կառուցների վրա, քանի որ «չեն հարգում հարևանների տարածքային ամրողականությունը և չեն հրամարվում «այսպես կոչված Ցեղասպանության անհիմն պեղումներից», նախարար Գյուլը ներկայացրեց Ծուրքիայի «բարի կամքի դրսուրման» վերջին փորձը՝ վարչապետ Էրդողանի նամակը ՀՀ նախագահին՝ պատմությունը վերագնահատելու և վերահմաստավորելու առաջարկով»¹²:

Խորհրդարանական այս քննարկումները գնահատելով չափանակ կարևոր և ժամանակին՝ Գյուլը հայտարարեց, որ «Ծուրքիան պատրաստ է դիմակայի մարտահրավերներին, քանի որ չի ամազում իր պատմության ոչ մի շրջանից և վճռական է պայքարել մինչև վերջ»¹³:

Ծուրքիայի նախկին գլուխավոր դիվանագետի՝ Հայոց ցեղասպանության և սեփական պատմության նման մեկնությունը մեկ անգամ ևս հաստատում է, որ Արդարությունը և զարգացում կուսակցության քաղաքական վերնախավը Հայաստանի հետ հարաբերությունների ծևակորման որևէ իրատեսական քայլ չէր ծեռնարկելու, քանի որևէ Հայաստանի Հանրապետությունը և սիյուռքահայ կառուցները չեն հրամարվել «այսպես կոչված, ցեղասպանության անհիմն պեղումներից և միջազգային ճանաչման գործընթացից»:

¹¹ Ա.24 առաջնորդի նախակը նախագահ Բյույյումին, ի թիվ Հայկական հարց դիմ պայքարի այլ գրոժունեթյունների, ծրագրել եր, փաստուն, այս խորհրդանական քննարկումների շրջանակներում էրողական-Բայրալ հանդիպման ժամանակ: Շաշգրավ է սակայն, որ այն ՀՀ նախագահին հասնելոց առաջ լայնուն թնարկվել էր Թուրքիայի քաղաքական վերահսկում և զանգվածային լրատվամիջոցներում:

¹² Güл A., Նշվ. Աշխ:

Այս հյորհրդարանական ընտարկումների արդյունքում Հայոց ցեղասպանության հերքման քարոզաշավում Անկարայի մշտական «գենքերից» դարձավ Երկու Երկրների պատմաբանների համատեղ հանձնախմբի ստեղծման առաջարկությունը, որը պետք է ուսումնասիրի Հայոց ցեղասպանության եղբության պատմական իրողությունը: Այսպիսի հանձնախմբի ստեղծումը հնարավորություն կտար Թուրքիային գոնե միահամանակ կասեցնել Հայոց ցեղասպանության ճնաչման գործընթացը: Հայկական կողմից համար Երկնուության այսպիսի ճնաչման բոլորովին անընդունելի է, քանզի նշանակում է ըննարկել և կասկածի տակ դնել Յեղասպանության իրողությունը:

Պատմաբանների հանձնախմբի ստեղծման առաջարկ կար նաև Հայոց Մեծ Եղեռնի 90-րդ տարեկանին ընդառաջ՝ Թուրքիայի վարչապետ Ռեժեփ Թայիփ Էրդողանի¹⁴ «Հայագահ Ռոբերտ Քոչարյանին ուղղված նամակում, որում նա առաջարկում է «պատմաբաններից և այլ փորձագետներից կազմված մի խորհ ստեղծել, որը 1915 թ. դեպքերն ու զարգացմանը կուսումնասիրի ոչ միայն Հայաստանի և Թուրքիայի, այլև Երրորդ Երկրների արիշիվներում և ուսումնասիրությունների արդյունքների մասին կտեղեկացնի միջազգային հանդուրժանը»¹⁵:

ՀՀ նախագահի դիրքորոշումը պատասխան նամակում հայուակ է: «Երկուով հարաբերությունների զարգացման պատմանասովությունը կրում են կառավարությունները, և մենք իրավասու չենք այն պատվիրակել պատմաբաններին»¹⁶: Հայոց ցեղասպանությունը անվճարկելի իրողություն է՝ քանից գիտականորեն ապացուցված, և խնդիրն արդեն գտնվում է քաղաքական հարթությանը:

Ուզագրավ է այն փաստը, որ Թուրքիայի վարչապետը նամակը հելց ապրիլին՝ Հայոց Յեղասպանության 90-րդ տարեկանի հիշատակության նախօրեին: Այս մարտավարությունը՝ փորձել ընթացիկ իրավիճակներից ստանալ առավելագույնը, նպատակ էր հետապնդում շենք միջազգային հանրության ուշադրությունը Յեղասպանության 90-րդ տարեկանի միջոցա-

ումներից և ցոյց տայ, որ թուրքական կողմն առաջինն է քայլ անմտ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Դա Անկարային որոշակիորեն հաջողվեց, ինչի մասին վկայում էին ելուուացի մի շարք քաղաքական գրոծիչների, մասնավորապես՝ Գերմանիայի կանցլեր Գերիհարդ Շյոնեթի ու Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դիսի, դրական գնահատականները¹⁷:

Հայաստանի Հանրապետության նախկին արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը Թուրքիայի վարչապետ Էրդողանին նամակը «քարոզական խաղ» որակեց՝ հայտարարելով: «Թուրքիայից դրւու Յեղասպանության ճնաչման խնդիրը ոչ որ պատմական հարթությունը չի դիտարկում: Պատմաբանների և ցեղասպանագետների համար սա փակված խնդիր է»¹⁷:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանության հիշատակման 90-րդ տարեկանին ընդառաջ Թուրքիայի հիշատակությունները և քաղաքական գիտական վերնախավը նախաձեռնեցին և հետևողականորեն իրականացրեցին Հայոց ցեղասպանության միջազգային ճնաչման և դատապարտման դեմ պայքարին ուղղված քարոզական, դիվանագիտական, քաղաքական, գիտահասարակական բազմաշերտ աշխատանքներ, որուք այնուամենայնիվ մարտահրավերներ են և՝ Հայաստանի Հանրապետության, և՝ Սիւյութի համապատասխան կառուցներին՝ դիվանագիտական, իրիտական, գիտահետազոտական, միջազգային իրավական, քանզի որոշ կերպափոխումներով, քայլ հիմնականուն նոյն նպատականուղղվածությամբ թուրքական Ժմտողական քարոզամեքենան շարունակում է գործել առ այսօր:

¹⁴ Հայ-թուրքական հարաբերություններ, հիմնախնդիրներ և հետանկարներ, Խորհրդարանական լուսներ 19-20-ը դեկտեմբերի, 2007 թ., Երևան 2011, էջ 414:

¹⁵ Նոյն տեղում, էջ 415:

¹⁶ Schröder, Almanya'nın konumunu değiştirdi, <http://www.mehmetalibirand.com.tr/yazidetay.asp?id=3418>

¹⁷ Վ. Օսկանյանի ելույթը. Հայ-թուրքական հարաբերություններ. Հիմնախնդիրներ և հետանկարներ, Խորհրդարանական լուսներ 19-20 դեկտեմբերի, 2007 թ., Երևան 2011, էջ 20:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Վահրամ Տեր-Մարտիսյան, պ. գ. թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ:
Զբաղվում է Թուրքիայի նորագոյն պատմության և տարածաշրջանային
անվտանգության խնդիրներով:

Անոյ Հովհաննիսյան

Աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում որպես ավագ
գիտաշխառող: Զբաղվում է Թուրքիայի երրոր և նորագոյն պատմության
հիմնախնդիրներով, տարածաշրջանային քաղաքականությամբ, ինչպես
նաև Հայոց ցեղասպանության հարցերով:

Նելլի Մինասյան, պ.գ.թ., դոցենտ

Խ. Արուկանի անվան հայկական պետական մանկավարժական հա-
մասարանի համաշխարհային պատմության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբողջ ռողբեն: Զբաղվում է Թուրքիայի արտաքին քա-
ղաքականության հարգերով, մասնավորապես կենտրոնասիական ուս-
ուության ուսումնասիրությամբ և համաթյուրքականությանը վերաբերող
խնդիրներով:

Տաթևիկ Մանուկյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտա-
խառող: Մասնագիտանում է Մերձավոր Արևելում քրոնական հիմ-
նախնդիրը, զբաղվում է Թուրքիայի նորագոյն պատմության խնդիր-
ների ուսումնասիրությամբ:

AUTHORS

Vahram Ter-Matevosyan, PhD

Head of the Turkish studies department at the Institute of Oriental Studies
NAS RA. His research interests include modern history of Turkey and
regional security issues.

Anush Hovhannisyan

Senior research fellow of the department of Turkey at the Institute of
Oriental Studies, NAS RA. Main fields of her research include the problems
of Modern and Contemporary history and regional policy of Turkey, as well
as the problems of Armenian genocide.

Nelli Minasyan, Assoc. Prof., PhD

Lecturer at the Chair of the World History and its Teaching Methods of the
Armenian State Pedagogical University After Khachatur Aboyan. Her
research interests include foreign policy issues of Turkey, particularly its
Central Asian direction and the questions of Pan-Turkism.

Tatevik Manukyan

Research Fellow of the Department of Turkey at the Institute of Oriental
Studies, NAS RA. Her research interests include the Kurdish Issues in Near
East, as well as problems of Turkish contemporary history.

АВТОРЫ

Ваграм Тер–Матевосян, к. и. н.

Заведующий отделом Турции Института Востоковедения НАН РА.
Занимается изучением вопросов новейшей истории Турции и
региональной безопасности.

Ануш Ованисян

Старший научный сотрудник отдела Турции Института Востоковедения
НАН РА. Занимается изучением вопросов новой и новейшей истории и
региональной политики Турции, а также проблемой Геноцида армян в
Османской империи.

Нелли Минасян к. и. н., доцент

Доцент кафедры Всемирной истории и методики ее преподавания Арм-
янского государственного педагогического университета им. Хачатура
Абовяна. Занимается вопросами внешней политики Турции, в частности,
изучением ее центрально-азиатского направления и проблематикой
пантюркизма.

Татевик Манукян

Научный сотрудник отдела Турции Института Востоковедения НАН РА.
Специализируется в области курдской проблематики Ближнего Востока.
Занимается внутриполитическими проблемами современной Турции.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ԹՈՒՐՔԻԱ.

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔՎԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՏՈՐ V (2)

Ուրբեն Սաֆրաստյանի խմբագրությամբ

Համակարգչային էջաղորումը Վերև Պապյանի

Հրատ. պատվեր № 753
Ստորագրված է տպագրության՝ 20.12. 2016թ.:
Զափսը՝ 60 x 100 ¼, 6 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ: